

Լ. Մ. Մելիքսեթ-բեկ

ՇԱՄՉԻ-ՄԵԼԻՔՈՆ  
ԵՎ ՆՐԱ  
ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԸ

Երևան · 1958





1900

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

---

Л. М. МЕЛИКСЕТ-БЕК

ШАМЧИ-МЕЛКО  
И  
ЕГО АРМЯНСКИЕ ПЕСНИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Եսմյի-Մեյի]

Մ-51

Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿ

ՅԵՐԿՐԴԱՆ Է 1961 Ք.

ՇԱՄՁԻ-ՄԵԼԻՔՈՆ

ԵՎ

ՆՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի  
Գիտությունների ակադեմիայի հմբագրական-  
հրատարակչական խորհրդի որոշմամբ:

*Խմբագիր՝ Բ. ՉՈՒԳԱՍՅԱՆ*

ՇԱՄՁԻ-ՄԵԼԲՈՅԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականությունն պատմության մեջ իր ուրույն տեղն ունի շանաստեղծ Շամչի-Մելքոն:

«Շամչի-Մելքո» կամ, ինչպես ոմանք (Գրիգոր Օրբելիանի, Սարգիս Բաստամյանց և Գ. Թարվերդյան) անվանում են «Չամչի-Մելքո», կեղծանունն է: Շամչի նշանակում է մոմագործ, իսկ Մելքո (ըստ նրա ժամանակակից վրաց գրող Դավիթ ռեկտոր Ալեքսի-Մեսխիշվիլու՝ Մելքումա) համառոտությունն է «Մելքխեղեկ» անվան<sup>1</sup>:

Գրականության մեջ երբեմն արտահայտված այն կարծիքը, թե իբր Շամչի շամեցի, այսինքն՝ դամասկոսցի է նշանակում<sup>2</sup>, իհարկե, ճիշտ չէ, քանի որ «չի» մասնիկը ոչ թե ծագման, այլ այս կամ այն արհեստին պատկանելու ցուցիչն է, ինչպիսիք են, օրինակ, թուլուսչի, քիսաչի, սիրաչի, չաչի, ղուլուղչի, բոստանչի:

Երգչի ազգանունը «Գուլքանով» հիշատակված է

---

<sup>1</sup> Բնական կլիներ «Մելքո»—«Մելքումա» ձևը «Մելքոն»-ի համառոտությունն ընդունել, սակայն սրա դեմ առարկում է այն հանգամանքը, որ «Մելքո»-ն ունեցել է եղբայր «Մելքոն» անունով (Գ. Ասատուր, Շամչի-Մելքո, «Պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր», 1, Երևան, 1938, էջ 146, ծան. 3):

<sup>2</sup> Գ. Լևոնյան, Հայ աշուղներ, Ալեքսպոլ, 1892, էջ 20: Մեսրոպ ձանաղյան, Պատմություն արգի հայ գրականության, 1, Վենետիկ, 1953, էջ 125: Այս կարծիքը յխտում է ինքը Գ. Լևոնյանը, տե՛ս նրա «Աշուղները և նրանց արվեստը», Երևան, 1944, էջ 28:

նախկին «Վրաց մեջ գրագիտութիւն տարածող ընկերութեան» № 1512 ձեռագրում (1821 թ.) առկա վրացերեն 6 բանաստեղծութեան վերնագրում, որ կարդացվում է այսպէս. «Մեկքուա Գուլքանովիսագան թըքմուլի», այսինքն՝ «Մեկքուա Գուլքանովի ասած»<sup>1</sup>: Հովսեփ Նորընտիր կաթողիկոս Արղութեանի հասցեով 1801 թ. մարտի 5-ին գրած իր հալցագրում բանաստեղծը իրեն «Գուլքանեանց Մեկքո» է անվանում:

«Գուլքան» (և ոչ թե «գյուլքան») ձևը, որը հատկապես Վրաստանումն էր տարածված, մատնանշում է բանաստեղծի կապը Վրաստանի և ոչ թե Շամ-Դամասկոսի (Սիրիա) հետ:

Ի դեպ նշենք, որ «Գուլքան» անունով հայտնի էին XV դարում՝ Քսանի էրիսթավ Քվենիփինեվիլիի «կողակիցը, թագուհու քույրը»<sup>2</sup>, իսկ XVIII դարում Օտիա Դադիանու «ամուսին տիրուհի թագուհին» և այլն<sup>3</sup>: Այս անունը կրում էր նաև Դիորդի Ծերեթելու «Գուլքան» վեպի գլխավոր հերոսը<sup>4</sup>:

Շամչի-Մեկքոյի ծագման մասին սկզբնաղբյուրներում հետևյալ տեղեկութուններն ենք գտնում.

1801 թ. մարտի 5-ին Հովսեփ Արղութեանին հասցեագրված նամակում Շամչի-Մեկքոն իրեն «մառնեուլցի Գուլքանեանց Բեթանի» որդի է կոչում: Հետևապես նրա հոր անունը կրել է Բեթան, ծաղումով Մառնեուլի գյուղից, որը գտնվում է Թբիլիսի—Նրեան եր-

<sup>1</sup> Е. С. Такайшвили, Описание рукописей „Общества распространения грамотности среди грузинского населения“, т. II, Тифлис, 1906—1912, стр. 877—886.

<sup>2</sup> Թ. Փորղանիա, Քրոնիկաներ, II, Թբիլիսի, 1897, էջ 22, 23, 27 (վրացերեն):

<sup>3</sup> Ն. Բերձեցիշվիլի, Վավերագրեր Վրաստանի սոցիալական պատմությունից, I, Թբիլիսի, 1940, էջ 468, 472 (վրացերեն):

<sup>4</sup> Հմատ. սույնպես կազմած անունը «Գուլնար» («Գուլնար»):

կաթուղային գծի նախկին Սանդար, իսկ այժմ Մառ-  
նեուլի կայարանի մոտ: Այս աեղեկութունը հավաստի  
են համարում Գեղամ Թարվերդյանը<sup>1</sup> և Գեորգ Ասատու-  
րը<sup>2</sup>. սրանցից առաջինը գլուղի անունը տղավաղել է  
«Բառնեուլի»-ի, եթե այստեղ, իհարկե, սովորական սըր-  
բազրական սխալի հետ գործ չունենք:

Մի այլ տեղ՝ «Ավալի բաշտան քիզ գովիմ, իժում  
բաղ ու բաղչադ, Թեւեթ» խաղում (մեր ներկա հրատա-  
րակությամբ № 13) Շամչի-Մեւքոն իրեն թիֆլիզեցի է  
համարում:

Ասում ին՝ սազով կոսիմ, յիս էս խաղն նազով կոսիմ.  
Չուրս խանա թարիփլամեն էսպես մուխամբազով կոսիմ.  
Թիֆլիզու Շամչի-Մեւքոն համաշա սոյբաթով կոսիմ...

Աղա-Մահմադ-խանի կողմից 1795 թ. սեպտեմբե-  
րի 11-ին Թբիլիսիի ավերման մասին գրած իր «Ողբ»-ում  
(մեր ներկա հրատարակությամբ № 12) Շամչի-Մեւքոն  
հիշում է իր ընտանեկան կացությունը՝ մի առ մի նշե-  
լով իր հարադատներին.

Յիս մե տան զայիմացա, հենց գիւյայի հերբս տարան.  
Մերբս ձեռնեմես խըլեցին, ջուխտ բուր, ջուխտ ախպերբս  
տարան.  
Հորբս թըրով ըսպանեցին, եսիր արին մերբս՝ տարան.  
Շամչի-Մեւքոն շատ լաց էլավ, ասավ՝ վուրբիս ձեռես  
տարան:

1801 թ. մարտի 5-ին գրած վերոհիշյալ վավերա-  
դրում Շամչի-Մեւքոն գրում է. «Խեղճ իմ հայր Բեժա-  
նը [Թիֆլիս] քաղաքի ավերման պահին անհավատների  
ձեռքով սպանվեց, կղբալըներս ու քույրերս գերի ընկան»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Հայ աշուղներ», Երևան, 1938, էջ 503:

<sup>2</sup> Գ. Ասատուր, Շամչի-Մեւքոն, էջ 143:

<sup>3</sup> Անդ, էջ 150 (բերում ենք աշխարհաբար):

Հետևապես, մինչ 1795 թ. սեպտեմբերը գեռես կենդանի են հղել Շամչի-Մեկքոյի ծնողները (հայրը՝ Բեժան, մոր անունը անհայտ), երկու քույրն ու երկու հղբայրը և իր որդին:

Շամչի-Մեկքոյի քույրերի ու հղբայրների անունները մի առ մի հիշատակված են Հովսեփ Արղուժյանին 1801 թ. փետրվարին նվիրված ոտանավորում՝ «Ով սրբփառան Յոսեփ, մինձ կաթուղիկոս» (մեր հրատարակության մ. 7)։

Յիս Շամչի-Մեկքոյն իմ, դու[ն] իս իմ ճարը.

Յա դու[ն] իս ճար, յիս օտկակարը.

Մեկքոյն, Բաղդասար, Շուշան, Մարմարը

Դու գովաթով թափիմ, դամ, հոքեվուր տե՛ր:

Կարճ ասած, Գուլքանենց Բեժանը 5 որդի է ունեցել՝ 3 աղա և 2 աղջիկ: Տղաների անուններն են՝ Մեկքո, նույն Մեկքիսեղեկը (Շամչի-Մեկքոյն), Մեկքոյն, Բաղդասար, աղջիկներինը՝ Շուշան և Մարմար:

Շամչի-Մեկքոյի ծննդյան և մահվան տարիները անորոշ են: Ըստ Գ. Լևոնյանի, Շամչի-Մեկքոյն բնակվում էր Թիֆլիսում 1740-ական թվականներին<sup>1</sup>: Իսկ ըստ Գ. Թարվերդյանի՝ Շամչի-Մեկքոյն ծնված պիտի լինի XVIII դարի 70-ական թվականներին<sup>2</sup>: Գ. Ասատուրի ենթադրությունը ևս «նա ծնվել է XVIII դարի 70-ական թվականներին և 1795 թ. գեռես ամուրի էր, որովհետև Թիֆլիսի ավերման նկարագրի մեջ նա չի տալիս ոչ մի տեղեկություն իր կնոջ կամ դստակի մասին: Սա-

<sup>1</sup> Գ. Լևոնյան, Հայ աշուղներ, 1892, էջ 20: Նույնը կրկնում է և Մեսրոպ Ճանաչյանը, Պատմութուն արդի հայ գրականության, I, Վենետիկ, 1953, էջ 125 (Շամչի-Մեկքոյն «1740-ի ատենները, կը բնակեր Թիֆլիս»):

<sup>2</sup> «Հայ աշուղներ», 1938, էջ 503:

կալն 1801—1802 թվականներին նա արդեն ամուսնացած էր և Թեհրանում քաջում էր Թրիլիսիում թողած իր ամուսնու կարոտը<sup>1</sup>:

Գ. Ասատուրը իր այս կզրակացության համար հիմք է ընդունել Թրիլիսի ավերման մասին Շամչի-Մեկքոյի «Ողբ»-ի տարբերակը, որտեղ «Շամչի-Մեկքոն շատ լաց էլալ, ասալ՝ վուրթիս ձեռես տարան» տողի փոխարեն ասված է՝ «Շամչի-Մեկքոն շատ լաց էլալ, ասալ՝ սըր-աի ծերըս տարան»: Մեզ թվում է Գ. Ասատուրը իր այս կռահման մեջ սխալվում է: Առաջին դեպքում պարզ ասված է որդին կորցնելու մասին, իսկ երկրորդ դեպքում նույն բանը փոխարևրական իմաստով է տրված:

Նշանակում է՝ Շամչի-Մեկքոն ամուսնացած է կղել մինչ 1795 թ. և այդ պահին ունեցել է մի զավակ, որին ևս զզլբաշները գերի են տարել:

Անկախ սրանից, Գ. Ասատուրը միանգամայն ճիշտ է նշել, որ «Շամչի-Մեկքոն ունենում է երկու զավակ՝ Մարտիրոս («Մարտին») և Սոփիո»<sup>2</sup>:

Գ. Տեր-Աղեքսանդրյանը, 1885 թ. հրատարակելով Շամչի-Մեկքոյի մի քանի խաղերը, «Ով վարթ, լիս իմ քիզ մոդ գալու» երկու տունից բաղկացած բանաստեղծություններ (մեր ներկա հրատարակությունում № 10) կցել է մի ծանոթություն այսպիսի բովանդակությամբ. «Շամչի-Մեկքոն Թեհրանում եղած ժամանակ գրել է այս երգը յուր կնոջը Թրիլիս, իսկ ինձ հասավ Շամչի-Մեկքոյի աղջիկ Սոփիոյից, որ այժմ 70 տարուց անց մի կին է և մասն և բաժին ունի յուր հոր բանաստեղծական քանքարից»<sup>3</sup>:

1 Գ. Ասատուր, Շամչի-Մեկքո, էջ 147:

2 Անդ:

3 Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թրիլիսեցոյ մտավոր կյանքը, Թրիլիս, 1885, էջ 43, ծանոթ.:

Այստեղից պետք է եզրակացնել, որ «70 տարուց անց» Սուրիոն ծնված պիտի լիներ 1885—70=1815 կամ 1810 թթ. մոտ: Հետևապես 1810—1815 թթ. միջոցին Շամչի-Մեկքոն դեռևս կենդանի է եղել, նույնիսկ ոչ էլ այնքան ծերացած:

Մյուս կողմից, ուշագրության արժանի է «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերության» № 1512 ձեռագիրը, որը պարունակում է, ինչպես ասացինք, Շամչի-Մեկքոյի վրացերեն 6 խաղերը, որոնք Դեորգ Թումանովի հանձնարարությամբ գրի է առել Դավիթ ռեկտոր Ալեքսի-Մեսխիշվիլին 1821 թ. նոյեմբերի 16-ին: Հետևապես, Շամչի-Մեկքոյի վրացերեն բանաստեղծությունների գրության terminus post quem-ը պիտի համարել 1821 թվականը: Իսկ նույն Շամչի-Մեկքոյի մի այլ բանաստեղծություն-քառյակը, որ կցված է Շոթա Ռուսթավելու «Վագրենալոր»-ի, այսպես կոչված, Ղարաբաղյան վարիանտին (արտագրված Չանախչի-Ավետարանոց գյուղում<sup>1</sup>) և բացահայտում է բանաստեղծի առնչությունը Վախտանգ արքայազնի՝ Հերակլի որդու (1762—1814) հետ, հորինված պիտի լինի ոչ ուշ քան 1814 թվականը:

Շամչի-Մեկքոյի հայերեն խաղերը, համեմատած վրացերենի հետ, կարծես թե ավելի վաղ են գրված: Համեմայն դեպ, Թիֆլիսի ավերմանը նվիրված «Ողբը» հորինված է անմիջապես 1795 թ. սեպտեմբերից հետո, իսկ Հովսեփ Արղուլթյանին նվիրված ձոնը՝ 1801 թ. փետրվարի 11-ի մոտերքում:

Այսպիսով, Շամչի-Մեկքոյի հայերեն և վրացերեն խաղերի հորինման թվականներն են՝ 1795, 1801, մինչ

<sup>1</sup> Լ. Մելիքսեթ-Ֆեկ, «Վագրենալոր»-ի Ղարաբաղյան վարիանտը, «Թրիլիսի պետ. համալսարանի Աշխատություններ», V, 1936, էջ 201—224 (վրացերեն):

1810, մինչ 1814, մինչ 1815 և մինչ 1821, որոնց հիման վրա կարելի է հանգել մի եզրակացության, այն՝ որ Շամչի-Մելքոն վախճանված պիտի լինի 1821 թ. հետո:

«Վագրենավոր»-ի հայերեն առաջին թարգմանիչը՝ Սարգիսը (Բաստամյանցը), իր մի հիշողության մեջ, որ տպված է 1860 թ., Շամչի-Մելքոյին անվանում է «հանգուցյալ» և «լուսահոգի»<sup>1</sup>:

Ըստ իս, պարզ է, որ Վրաստանի պետական կենտրոնական արխիվում հին վրացերեն վավերագրերի ֆոնդում (№ 1450) պահպանված փաստաթղթերի շարքում առաջին դավթարի (№ 62) և յոթերորդ դավթարի (№ 40) ներքո 1737 և 1738 թթ. շուրջ հիշված «Գուլքանաշվիլի Մելքուա»-ն այլ անձնավորություն պիտի լինի, գուցե Շամչի-Մելքոյի պապը, որ ապրում էր XVIII դարի առաջին կիսում:

Այսպես թե այնպես, եթե Շամչի-Մելքոյի մահվան թվականն ընդունենք 1821-ից հետո, ծննդյան թվականը կարելի է ենթադրել 1750-ական թվականներին:

Գ. Ասատուրը, որն անձամբ ճանաչելիս է եղել Շամչի-Մելքոյի հեռավոր ժառանգներին, ըստ նրանց հաղորդած տվյալների ամփոփել է բանաստեղծի ծննդաբանությունը մինչև հրրորդ աստիճան:

Եվ ահա, համաձայն այդ և մեր պրպտումների, Շամչի-Մելքոյի ծննդաբանությունը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

Գուլքանաշվիլի Մելքուա (Մելքիսեդեկ)

հիշվում է վրացական վավերագրերում 1737—1738 թթ.

Գուլքանենց Բեթան մառնեուլցի↔կինը (?)

սպանված 1795 թ.

<sup>1</sup> «Կոռնիկ հայոց աշխարհի», 1860, № 1, էջ 80:

Գուլքանով Մեկքո ↔ Կինը(?) Մեկ- Բաղ- Շու- Մար-  
(Մեկքիսեդեկ) քոն դասար շանիկ մար

Նույն Շամչի-Մեկքո

ծնված 1750 մոտերքը,  
վախճ. 1821 հետո

գերի ընկածներ պարսից ձեռքը  
1795 թ. 11. IX.

Մարտիրոս (Մարտին) ↔ Կինը(?)

ծնված մինչ 1795

Սուրիո ↔ Սամթելյան

ծնված 1810 մոտերքը

Էփենիս ↔ Մեկիքյան

19-րդ դ.

Նատալիս ↔ Ուղղինյան

19-րդ դ.

Իր հիմնական մասնագիտությամբ Շամչի-Մեկքոն,  
ինչպես վերևում նշվեց, եղև է մոմագործ, ճարպից մոմ  
պատրաստող: Որպես արհեստավոր, նա, իհարկե, պիտի  
ունենար իր արհեստանոցը (գուքանը), նաև սպասա-  
վորներ՝ քարգար-աշակերտներ:

«Արհեստավորական» ողով ևն ներշնչված Շամչի-  
Մեկքոյի խաղերի մեծ մասը:

Ինչպես նշեցինք, Շամչի-Մեկքոն, համաձայն իր  
գուստր Սուրիոյի կողմից Գ. Տեր-Աղեքսանդրյանին հա-  
ղորդած տեղեկության, Թեհրանում կղած պահին է գրել  
իր «Ով վարթ, լիս իմ քիզ մոդ գալու» խաղը (մեր հրա-  
տարակությամբ № 10), որն իր կնոջն է ձոնված, և ուր  
նա մխիթարում է կնոջը՝ ավետելով իր մոտակա վերա-  
դարձը: Իսկ այս վերադարձը Թեհրանից Թիֆլիս կա-  
րող էր տեղի ունենալ միմիայն Վրաստանը Ռուսաստա-  
նին միանալուց հետո, մոտավորապես 1801—1802 թթ.,  
երբ Շամչի-Մեկքոյին հնարավորություն ստեղծվեց գնալ  
Պարսկաստան և որոնել իր «շուխտ» քույր և «շուխտ»  
կղբալրներին, որոնց Աղա-Մահմադ-խանի զորքերը  
1795 թ. սեպտեմբերին գերի էին տարել:

Հետաքրքիր է, թե ինչո՞ւ Շամչի-Մեկքոն իր վրացերեն խաղերում իրեն անվանում է այս կամ այն վրաց արքայազնի «ծառա» կամ «ստրուկ» (մոնա), նույնիսկ «ճորտ» (ղձա):

Այսպես, օրինակ, «Մուխամբազո ոցխո տիրիլո խմա խարո» («Մուխամբազ հաղվապուտ, քաղցր ձայն») վերնագիրը կրող խաղի վերջին (չորրորդ) տան վերջին տողում բանաստեղծը ասում է.

Շամչի-Մեկքո, [դու] Փառնավազ [արքայազն]ի ճորտն ես:

Իսկ «Վաղրենավոր»-ի Ղարաբաղյան վարիանտին կցված քառյակում կարդում ենք.

Ես ստրուկն եմ Վախտանգ [արքայազն]ի, որին զովում եմ  
մաջամայով:

Կարծում ենք, որ սխալ չենք լինի դործած, եթե «ճորտ» և «ստրուկ» տերմինները ավյալ դեպքում մեկնաբանենք ոչ թե ուղղակի խմաստով, ինչպես մի ժամանակ ենթադրում էր Գ. Ասատուրը<sup>1</sup> և հետագայում հրաժարվեց այդ տեսակետից<sup>2</sup>, այլ փոխարենական առումով, իբրև համեմատության ու խոնարհության արտահայտություն: Հավանաբար Շամչի-Մեկքոն, իբրև մոմագործ, կապ է ունեցել ոչ միայն արհեստավորական և առևտրական խավերի հետ, այլև բարձր դասի, մասնավորապես արքայական դասն և վերջինիս առանձին ներկայացուցիչների հետ, որոնց նա թերևս մոմ է մատակարարել: Ուստի և միանգամայն հասկանալի ու բնական պիտի լինի նրա խաղերում զույգ արքայազուն-

1 Գ. Ասատուր, Սյաթ-Նովայի հարցը, «Ճորհրդային Վրաստան», 1926, № 88:

2 Գ. Ասատուր, Շամչի-Մեկքո, էջ 143—144:

ների՝ Փառնավազի (1762—1814) և Վախտանգի (1777—1852) անունների հիշատակությունը<sup>1</sup>:

Շամչի-Մեկքոյի կենսագրությունից հետաքրքիր է նաև այն, որ նա 1801 թ. էջմիածնի հայրապետական ակթոսին նվիրել է իր «ճորտերը», որոնց նա հավանաբար դրամով լինելը գնած կամ փրկանքով ազատած գերությունից:

Այս փաստը արձանագրված է Շամչի-Մեկքոյի սեփական ձեռքով վրացերեն լեզվով գրած դիմումի մեջ՝ ուղղված Հովսեփ կաթողիկոս Արղությանին, վերջինիս թիֆլիսում եղած պահին՝ 1801 թ. մարտի 5-ին: Այս փաստաթուղթը հայտնաբերել և հրատարակել է Գ. Ասատուրը<sup>2</sup>: Բերում ենք դիմումը ամբողջությամբ՝ նույն ժամանակվա գրաբար թարգմանությամբ:

«Սրբազան տեառն Յովսէփ կաթողիկոսին.

Զորութիւն գրոյս այս է, որ ես, մառնէուլէցի Գուրանեանց Բէժանի որդի Մեկքօս, իմ սեփական ճորտ էնագեցի Առաքելի որդւոյ չիթսաղ Յոհանէսի զորդիսն՝ զԳօդին, զԳասպարն և զՄօսն իւրեանց որդւովք և ապագայիւք, իմ կամաւ և յօժարութեամբ ընծայեցի սուրբ էջմիածնին, այսպէս որ, ողորմելի հայրն իմ Բէժանն ի յաւերման քաղաքիս, յանօրինաց ձեռամբ սպանեալ եղի, եղբարքս և քորքս ևս գերի անկան և հայր Բէժանի հոգեկան [հոգւոյ] և իմ գերեաց փրկութեան համար: Սոյն ռամկաց հին կապալայն, այսու պատճառաւ ոչ մատուցի ձեզ յոր այլ ռամիկք ևս գերեալ էին, և սոյն իմ գիրս մատուցի ձեզ, ամենայն հայոց Պատրիարքիդ, որ յայնմհատէ լինիցի սրբոյ էջմիածնի

<sup>1</sup> Акты Кавказской Археографической Комиссии, т. IV, стр. 112—113, 132—134.

<sup>2</sup> Գ. Ասատուր, Շամչի-Մեկքո, էջ 150.—153:

ճորտ և սպասաւորեացէ, որպէս ճորտոց կարգն է և ոչ ոք իցէ որ զրպարտող և դաւարար, բաց յաստուծոյ, ոչ պարոն և ոչ ճորտ և ոչ իմ ազգական մարդ, թէ ոք դաւ արացէ, պատասխանատուն ևս իցեմ, է որ վկայն ինքն աստուած, ի մարդկանէ Թումանի որդի մզիւան Սուլխանն և Թաղոյի որդի Եսայի Աղայ և սրբոյ Էջմիածնի ճորտոց ոստիկան իմ խոստովանահայր աւագ քահանայ տէր Դաւիթն և ես ինքս Մեկքօս գրեալ եմ և հաճոյ ևս եմ. գրեցաւ ի Թիֆլիզ քաղաքն մարտի 5, 1801 թուին»:

\* \* \*

Շամչի-Մեկքոն, իբրև Սայաթ-Նովայի հեանորդ և հետևորդ, իր ուսուցչի նման ստեղծագործում էր երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն: Ադրբեջաներեն խաղերը դեռևս քննության և հետազոտության առարկա չեն դարձել, ուստի և մեր ամբողջ դատողությունը Շամչի-Մեկքոյի ստեղծագործության մասին սահմանափակվում է նրա հայերեն և վրացերեն խաղերի շրջանակով:

Շամչի-Մեկքոյի վրացերեն խաղերից առաջին հայտնի է միմիայն 8-ը, որոնցից 6-ը պահպանվել է «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերության» ձեռագիր հավաքածուի № 1512-ի մեջ (էջ 877—886), մեկը հրատարակել էր դեռևս 1870 թ. Գ. Սկանդար-Նովան, մեկն էլ հայտնագործվեց «Վագրենավոր»-ի Ղարաբաղյան վարիանտում, որ այժմ գտնվում է Վրաստանի Պետական թանգարանի վրացերեն ձեռագրերի նոր հավաքածուում, № 279-ի ներքո (էջ 132բ):

Ընդհանրապես Շամչի-Մեկքոյի վրացերեն խաղերի չափն է 16 կամ 11 վանկ, և միայն մեկինը՝ 14:

Միաժամանակ կարևոր է նշել, որ Դավիթ ղեկավարը այդ խաղերից մեկը անվանում է «Արթուրլամա թախ-

միսի», մնացածները՝ «մուխամբազի»: Հիշված ձևա-  
գիր-ժողովածուի էջ 196-ում տրված է վերջինիս մեկ-  
նաբանությունը՝ «Մուխամբազը արաբերեն է, իսկ վրա-  
ցերեն կառվի հինգ տնից բաղկացած»:

Ցարդ Շամչի-Մեղքոյի վրացերեն ոչ բոլոր խաղե-  
րեն են հրատարակված, մի-մի խաղ հրապարակված  
է հետևյալ աշխատություններում. Գ. Սկանդար-Նովա,  
Սալխինո սազանդարի, Թիֆլիս, 1870, էջ 47—48:  
Լ. Մելիքսեթ-Ֆեկ, «Վազրենավոր»-ի հայ արտագրիչ-  
ները, «Գրական ժառանգություն», Լ, Թբ., 1935, էջ 668,  
նույնի՝ «Վազրենավոր»-ի Դարաբաղյան վարիանտը,  
«Թբ. Պետ. համալսարանի Աշխատություններ», V, Թբ.,  
1936, էջ 202 (հմմտ. Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Շոթա Ռուս-  
թավելու «Վազրենավոր»-ի հայ արտագրիչները, «Պրո-  
լետար», 1937, № 296): Մ. Չիքովանի, Ֆոլկլորային էտ-  
յուդներ, Լ, «Պոռչկինի անվան Թբ. Պետ. մանկավար-  
ժական ինստիտուտի Աշխատություններ», VI, Թբ., 1949,  
էջ 83: Տրիֆոն Ռուխաձե, Հին վրացական լիբլիայի  
պատմությունից, Թբ., 1954, էջ 199—200:

Վրացերենի հետ համեմատած ավելի լայն չափով  
են հրապարակ հանված Շամչի-Մեղքոյի հայերեն խա-  
ղերը, որոնց թիվը հասնում է 15-ի, սրանցից մի քա-  
նիսը ամբողջովին կամ մասամբ հրատարակված է տար-  
բեր վարիանտներով: Ուսանավորների հրատարակու-  
թյունն ունի մոտ 100 տարվա պատմություն՝ սկսած  
1852—1859 թթ.:

1. 1859 թ. Ոսկան Տեր-Գեորգյան Հովհաննիսյան  
Երևանցին Մոսկվայում հրատարակած իր «Նոր քնար  
Հայաստանի. Երկասիրությունը ազգային երգչաց» շար-  
քի Ե տետրակում գեակոլում է Շամչի-Մեղքոյի ողբը՝  
«Ի վերայ աւերման Տփլիս քաղաքի դալատեամբ Աղայ  
Մուհեմէդ-խանի», էջ 14—16 (մեր ներկա հրատարա-

կուլթյամբ № 12) և «Խարաղ Ջալի», իմ առաջին լինելու արևի», էջ 42—43 (մեր. ներկա հրատարակություն № 4):

2. 1868 թ. Միքայել Միսնասարյանի Մոսկվայում լույս ընծայված «Քնար հայկական»-ում, էջ 564—565, երկրորդ անգամ հրատարակվեց Շամչի-Մելքոնի «Ի վերայ աւերման Տիսիս քաղաքի գալստեամբ Աղայ Մուհամմէդ խանի» բանաստեղծությունը բաղկացած 8 տունից, որոնցից մեկը՝ 5-րդ տունը, գրվել է 1852 թվականից էր հայտնի. տե՛ս Գեորգ Ախվերդյան, «Սուլեյման Նովայ» (Մոսկվա), 138 էջ. իսկ 2-րդ տան առաջին և երրորդ տողերը 4-տողանի մի տան վերածելով օգտագործված էր 1882 թ. լույս տեսած Բաֆֆիի «Խամսայի մեկի լիքությունները» երկում, էջ 185, իրիև մեկն էլ այսօր Հավլարարի հին կանանց բերանում» կարդացվող «անեծք»։ Նույն այդ տունը նույն ձևով կրկնվում է Բաֆֆիի «Երկու ամիս Աղուանից և Սյունյաց աշխարհներում» հոդվածում, «Լուսն», 1896 թ., № 1, էջ 87, ժան. 2: Նմանապես հենց այս 2-րդ տունը ամբողջությամբ, ինչպես և 7-րդ տունը ամբողջությամբ առկա են Գալուստ Շերմազան-Վարդանյանի Ռոստոմում 1890 թ. տպած գրքում՝ «Նյութեր ազգային պատմության համար. Երևելի հայկազունք ի Պարսկաստան», էջ 62—63: Վերջապես, 4-րդ տան երկրորդ, չորրորդ և հինգերորդ տողերը, 6-րդ տունը ամբողջությամբ և 8-րդ տան առաջին, երրորդ, չորրորդ և հինգերորդ տողերը փոփոխված վիճակում մեզ հանձնել է Երվանդ Գալսյանը, որը 1938 թ. Ջավախկի Ռիֆ գյուղում գրի է առել Արամ Սարուխանյանից: Մենք այն հրատարակեցինք Թբիլիսիի «Պրոլետար» թերթի 1938 թ. № 179-ում: «Ողբը» ամբողջությամբ արտատպված է նաև 1895 թ. Բաքվում հրատարակված «Տարեգարծի հիշատակներ. Արորի օրացույցը» գրքում, էջ 111—112:

3. 1885 թ. Գեորգ Տեր-Աղեքսանդրյանը Թբիլիսիում հրատարակած գրքում՝ «Թիֆլիսեցոյ մտավոր կյանքը», մտցնում է Շամչի-Մելքոյի 5 բանաստեղծութունը, այն է. ա. «Էսադանց դնացի Մառնեուլ», էջ 36 (մեր հրատ. № 8 var.), բ. «Մե տարի դնացի Չիթախինց բաղը», էջ 40, որն մյուս վարիանտում Դարբեղխարին է վերագրված (մեր հրատ. № 15), գ. «Սարազի ադաթն է՝ կու կըրծե կաշին», էջ 42 (մեր հրատ. № 5), դ. «Ով վարթ, լիս իմ քիզ մոդ գալու», էջ 43 (մեր հրատ. № 10) և ե. «Շամչի-Մելքոն տեհավ էրազ», էջ 43 (մեր հրատ. № 8, 6-րդ տան var.):

4. 1903 թ. Գեորգ Ախվերդյանի դուստր Մանե Ախվերդյանի հոգատարությամբ և Հայոց Աղագորական ընկերության հրատարակությամբ լույս ընծայված Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» շարքի II հատորում դետեղված էր Թբիլիսիի բարբառով ստեղծագործող 17 աշուղների և, ի միջի այլոց, Շամչի-Մելքոյի խաղերը, թվով 7, էջ 265—275, 490, որոնք են. ա. «Անգաճ արան, գովքըթ սսիմ, տալավրեցի շուն Առաքիլ», էջ 265—266 (մեր հրատ. № 1), բ. «Բարակ մեչկիթ օսկե քամարբանդ պիտի», էջ 267—268 (մեր հրատ. № 2), գ. «Սարազ Չալի, իմ տաս շահին լինչ արիք», էջ 269—270 (մեր հրատ. № 4), դ. «Հավատովըս հավատամ», դռնամա, էջ 271—272 (մեր հրատ. № 6), ե. «Ո՛վ սըրփազան Յոսեփ, մինձ կաթուղիկոս», էջ 273—274 (մեր հրատ. № 7), գ. «Քաղկեն զընացի Մառնեուլ», դուրեկդ, էջ 275 (մեր հրատ. № 8) և է. «Ավալի բաշտան քիզ գովիմ», էջ 490 (մեր հրատ. № 13):

5. 1932 թ. Գաբեգին Լևոնյանի խմբագրությամբ երևանում հրատարակված «Սալաթ-Նովա» գրքում, ի միջի այլոց, հրապարակ հանվեց Գ. Լևոնյանին պատկանող ձեռագրում առկա Շամչի-Մելքոյի մի խաղը ևս,

այն է՝ «Բու էշխմանն հիվանդացա, այ գողալ», էշ 68 (մեր հրատ. № 11):

6. 1934 թ. Գեորգ Ասատուրը Երևանի «Գրական թերթ»-ում (№ 18) հրատարակեց Գեորգ Ախվերդյանի թղթերում հայտնադորժած Շամչի-Մելքոյի խաղը՝ «Բարակ մեղիթ քամար, թիրման շալ պիտի» (մեր հրատ. № 9):

7. 1937 թ. Գեղամ Թարվերդյանի կազմած և Երևվանում հրատարակած գրքում՝ «Հայ աշուղներ. Անտիպ երգերի ժողովածու», էջ 23, տպագրված էր Շամչի-Մելքոյի «Դուն աննըման իս» խաղը (մեր հրատ. № 14):

8. 1938 թ. մեր հոգևածում «Շամչի-Մելքոյի անտիպ երգերից», որ տպվեց Թրիխիի «Պրուետար» թերթի № 179-ում, հրապարակ հանվեց Շամչի-Մելքոյի 2 բանաստեղծությունը. ա. «Դուն աննըման իս», համաձայն Գեղամ Թարվերդյանի մեզ հասցրած պատճենի (մեր ներկա հրատ. № 14) և բ. «Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի դալստեամբ Աղայ Մուհեմէդ խանի» 4 տուն-վարիանս պարունակող, որոնցից առաջինը անհայտ էր, իսկ մնացածները կրկնություններ են 6-րդ տան 1—5 տողերի, 4-րդ տան երկրորդ, չորրորդ և հինգերորդ տողերի և 8-րդ տան առաջին, երրորդ, չորրորդ և հինգերորդ տունների:

9. 1944 թ. մեր հոգևածում «Նորագյուտ վրացատառ-հայերեն ձևադիր ժողովածուն և XVII—XIX դդ. աշուղական անծանոթ խաղերը», որ տպվեց Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» № 5-ում, էջ 37—38, հրապարակեցինք Շամչի-Մելքոյի 2 բանաստեղծությունը. ա. «Մե տարի գնացի Պենտեղինց բաղըն» (մեր հրատ. № 9) և բ. «Ուղում իմ թարխիդ անիմ, տալավրեցի շուն Առաքիլ» (մեր հրատ. № 1 var.):

10. 1947 թ. Աս. Մնացականյանի «Անտիպ էջեր (Սալաթ-Նուլա, Շամչի-Մեկքո, անանուն երգիչ)» հոգվածում, որ տպվեց նույն «Տեղեկագրի» № 5-ում, էջ 92, հրապարակ հանվեց Շամչի-Մեկքոյի մի խաղը՝ «Քու էշխմեն հիւլանդացա, ալ դողալ» (մեր հրատ. № 11 լրիվ տեքստը):

11. 1957 թ. Հ. Սահակյանը «Շամչի-Մեկքոյի մի բանաստեղծության մասին» հոգվածում (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 12, էջ 85—91) հրապարակեց Շամչի-Մեկքոյի «Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի, գալուստեամբ Աղա Մուհամեդ խանի» բանաստեղծության համեմատական տեքստը: Հրատարակչուհին, հիմք ընդունելով Հայկական ՍՍՌ պետական ձեռագրատան (Մատենադարանի) № 3751 ձեռագրի էջ 49—51-ում եղած օրինակը, այն համեմատել է նույն ձեռագրի 212—214 և 845—847 էջերում գտնվող այլ տարբերակների ու № 6588 ձեռագրի էջ 37ա—38ա օրինակի հետ:

Այսպիսով, Շամչի-Մեկքոյի հայերեն խաղերի (հանդերձ տարբերակներով) միատեղ հավաքման և վերականգնման գործում մենք օգտագործել ենք ստորև հիշված հրատարակութունները, թույլ տալով մեզ ուղղել բնագրերը ըստ Թբիլիսիի բարբառի առանձնահատկությունների, որոնք շատ հաճախ աղավաղել են նույն խաղերը ասողները և կամ գրի առնողները՝ բարբառին ոչ լրիվ տիրապետելու հետևանքով: Շամչի-Մեկքոյի խաղերի մի մասը մեզ հասել է վրացատառ գրությամբ, որի հետևանքով նրանք կրկնակի աղավաղվել են:

№ 1 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:

№ 1 var. — Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 5:

№ 2 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:

- № 3 — Գ. Ասատուր, «Գրական թերթ», 1934, № 18:
- № 4 — Ո. Տեր-Գեորգյան - Հովհաննիսյան, Նոր քնար Հայաստանի, V, 1859:
- № 4 — Գ. Լևոնյան, Հայ աշուղներ, 1892:
- № 4 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:
- № 5 — Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, 1885:
- № 6 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:
- № 7 — Նույնը:
- № 8 — Նույնը:
- № 8 — Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, 1885:
- № 8 var. — Նույնը:
- № 9 — Լ. Մելիքսեր-Յեկ, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 5:
- № 10 — Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, 1885:
- № 11 — Գ. Լևոնյան, Սալաթ-Նովա, 1932:
- № 11 — Աս. Մնացականյան, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 5:
- № 12 — Ո. Տեր-Գեորգյան-Հովհաննիսյան, Նոր քնար Հայաստանի, V, 1859:
- № 12 — Մ. Միանուարյան, Քնար հայկական, 1868:
- № 12 var. — Գ. Ախվերդյան, Սալաթ-Նովա, 1852:
- № 12 var. — Բաֆֆի, Խամսայի մեկիքությունները, 1882:
- № 12 var. — Բաֆֆի, «Լուսմա», 1896, № 1:
- № 12 var. — Գ. Շերմազան-Վարդանյան, Նյութեր աղգային պատմության, 1890:
- № 12 — «Արորի օրացույցը», 1895:

№ 12 var.— Լ. Մելիքսեթ-Ֆելի, «Պրոլետար», 1938,  
№ 179:

№ 12 var.— Հ. Սահակյան, Հայկական ՍՍՌ-ի ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 12:

№ 13 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:

№ 14 — Գ. Թարվերդյան, Հայ աշուղներ, 1937:

№ 14 — Լ. Մելիքսեթ-Ֆելի, «Պրոլետար», 1938,  
№ 179:

№ 15 — Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, II, 1903:

№ 15 — Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց  
մտավոր կյանքը, 1885:

Շամչի-Մելքոյի բոլոր այս խաղերը վարիանտներով հանդերձ մեզ հաջողվեց վերածել վրացերենի, մեր իսկ չափածո թարգմանությունը<sup>1</sup>, որ նույն Շամչի-Մելքոյի վրացերեն խաղերի հետ միասին հրատարակվելու են առանձին՝ վրացերեն առաջաբանով, ներածականով և համապատասխան հավելվածներով:

\* \* \*

Շամչի-Մելքոյի ստեղծագործությունն ընդհանուր բնութագիրը տրված է Գ. Ասատուրի կողմից հետևյալ ձևով<sup>2</sup>.

«Շամչի-Մելքոն, Սալաթ-Նովայի ժամանակակից, բայց նրանից ավելի ջահել այդ բանաստեղծը, թեպետ իր տաղանդով չի հասնի Սալաթ-Նովային, սակայն իբրև լուրատիպ բանաստեղծ արժանի է մեծ ուշադրության: Այդ կողմից նրա հետ ոչ միայն Սալաթ-Նովան, այլև

<sup>1</sup> Մի քանի խաղերի թարգմանությունը տրված է մեր «Հայ հին գրականությունն պատմությունը» գրքում (Թրիլիսի, 1941, էջ 209—213):

<sup>2</sup> Գ. Ասատուր, Շամչի-Մելքո, «Պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր», № 1, Երևան, 1938, էջ 141—142:

միջնադարյան բանաստեղծներից շատ քչերը կարող են մրցել: Նա, կարելի է տեսլ, մեր միակ ունակիստ և միաժամանակ գերազանցապես երգիծարան ժողովրդական բանաստեղծն է: Նրա երկերի գլխավոր առարկան էր իր ժամանակակից կյանքը, իր տեսած և շոշափած միջավայրը և ոչ ֆանտազիան և շինծու պատկերներն ու դրացմունքները: Իհարկե, պոեզիայի այս վերջին տեսակին նա ևս տուել է իր տուրքը, սակայն այս տուրքն աննշան է և դրանով չէ, որ մենք արժեքավորում ենք նրան:

«Ահա նա նկարագրում է Թբիլիսիի քստմեների ավերումը 1795 թվականին Աղա-Մահմադ-խանի զորքերից և իր հերոսական մասնակցությունն արյունալի կոիմլեբում, որ ճշտվում է վավերաթղթով: Մի տրիշ տեղ նա հրճվանքով և գունագեղ նկարագրում է Թբիլիսաբլենակ բոլոր ազգություններին շատ ծանոթ և նրանցից սիրված ուխտագնացությունը դեպի Թեկեթ, մի երրորդ տեղ լսվում է նրա բարեմիտ հեգնանքը՝ ուղղված իր հայրենակից մառնեուլցիների ժլատության կամ, ավելի ճիշտ, նրանց չքավորության դեմ, կամ, վերջապես, հրնչում է նրա պարզ, ընկերական ծիծաղն իր հարեան արհեստակիցների դեմ, որոնք ճշտապահ չեն իրենց առօրյա կենցաղային դրժերում»:

Շամչի-Մեկթոյի պոեզիայի մասին աված իր այս գնահատականը Գ. Ասատուրը վերջացնում է հետևյալ տողերով. «Եթե մեր բոլոր միջնադարյան բանաստեղծների և մինչև անգամ, լայն մտքով ասենք, առհասարակ գրողների շարքում ունենալինք Շամչի-Մեկթոյի նման հեղինակներ, մեր անցյալի կենցաղի շատ կոպմեր, որ մեզ մոթ են մնացել, պարզ կլինին այժմ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Գ. Ասատուր, Շամչի-Մեկթո, «Պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր», I, 1938, էջ 142:

Շամչի-Մեկքոյի ստեղծագործությունն այն կերպ-  
ինչպես հասել է մեզ 15 հայերեն և 8 վրացերեն խա-  
ղերում, առհասարակ բաղմերանդ է: Վրացերեն խաղերը,  
բացառութամբ երկուսի, սիրալին բնույթի են: Հայերեն  
խաղերից միմիայն հինգն է սիրալին (մեր հրատ. № № 2,  
3, 10, 11 և 14), մնացածը ալիալլ բովանդակութամբ  
է, սրանց թվում մեծ մասը Թրիլիսիի և նրա շրջակայ-  
քի առօրյա կյանքի տառնձին մոմենտներն են պատկե-  
րում՝ արհեստավորական հոգևրանությամբ գրոշմված,  
որոնց մեջ հանդես են գալիս ջրադացպանը (№ 1), խա-  
րադ-կոշկակարը (№ 4, 5), շամչի-մոմագործը (№ 4),  
բաղվանչի-ալգեպանը (№ 9, 15) և այլն: Բացի դրանից,  
Շամչի-Մեկքոն ունի զուտ կենցաղային բնույթի խա-  
ղեր (№ 8 և 8 var.), նմանապես հեղինակի «հավա-  
տամք»-ը պարունակող կրոնական-միստիքական մի  
խաղ (№ 6), ուղերձ նորընտիր, բալց դև չօծված, Հով-  
սևի կաթողիկոս Արդուլթյանին (№ 7), «Ողբ» 1795 թ.  
Թրիլիսիի ավերման օրից (№ 12, 12 var.), «Գովք»  
Թեկեթի ս. Գևորգ ուխտատեղիի (№ 13) և այլն:

Վրացերեն խաղերում Շամչի-Մեկքոն հանդես է գա-  
լիս իբրև Սալաթ-Նովայի հետևորդ և նմանվող, նամա-  
նավանդ սիրալին բանաստեղծություններում և Թեկե-  
թին նվիրված ոտանավորում, մասամբ էլ միանգամայն  
ինքնուրույն է՝ մի տեսակ նոր, եթե կարելի է այսպես  
ասել, հումորիստական-գովեշտական և սատիրական-  
երգիծաբանական ժանրին հետևող:

Շամչի-Մեկքոյի գովեշտական և երբեմն երգիծա-  
բանական ոճով գրած խաղերն են. վրացերեն՝ «Շնոր-  
հավորում եմ քեզ, Թեյմուրազ, ոստիկանապետ դառ-  
նալը» և հայերեն՝ «Անգաճ արս, գովքըդ ասիմ, տալավ-  
րեցի շուն Առաքիլ» (մեր ներկա հրատ. № 1), «Ուղում  
իմ թարիլիդ անիմ, տալավրեցի շուն Առաքիլ» (մեր  
հրատ. № 1 var.), «Խարազ Չալի, իմ տաս շահին լինչ

արիւր» (№ 4), «Սարազի տաթն է՝ կու կըրծէ կաշին» (№ 5), «Բաղկին զընացի Մառնեուլ, նահաղ նընդա դա-  
վի մեչըն» (№ 8), «Էսաղանց դնացի Մառնեուլ» (№ 8  
var.), «Մե տարի զընացի Պենտեւինց բաղըն» (№ 9):

Ինչպես այս խաղերում, նույնպես և այլուր, օրի-  
նակ, Թելեթի ուխտագնացությանը նվիրված երգում  
(մեր հրատ. № 13), որը պարզապես ձայնակցում է  
Սայաթ-Նովայի՝ Թրիլիսիի Մողնինին նվիրվածին<sup>1</sup>, ար-  
տացույթ է հին Թրիլիսիի արվարձան Կրծանիսով հան-  
դերձ (որտեղ էլ գտնվում էր «Պենտեւինց բաղըն») իր  
հինավուրց սովորութեներով և աղաթներով, ապա և մայ-  
րաքաղաքի շրջակայքը՝ Թելեթը, Մառնեուլին, Տալա-  
վերը, Շավի (Մաշավեր) դեառ և, վերջապես, Սղնալը:

Թելեթը գյուղ է Սողանուսի կամ Սոմխիթի (Թե-  
լեթի) լեռնաշղթայի ետև, Կրծանիսից «յայնկոյս», որը  
հնուց հռչակված էր իբրև ս. Գեորգի ուխտատեղի, հիշ-  
ված լինելով բազում պատմական վավերագրերում<sup>2</sup> և  
XIX դ. գեղարվեստական գրականություն մեջ, մաս-  
նավորապես Իլիա Ճավճավաձեի «Մարդ է աթմորթին»  
(Կացիա-ադամիանի) վեպում և Գևորգ Տեր-Աղեքսան-  
դրյանի «Ուխտագնացություն դեպի Թելեթ» պիեսում<sup>3</sup>:  
Շամչի-Մելքոն իր այս երգում հատկապես ընդգծում է  
Թելեթի ուխտագնացության-տոնի ընդհանուր ժողո-  
վրդական բնույթը:

<sup>1</sup> Սայաթ-Նովա, խմբագրությունը Գ. Լեոնյանի, Երևան,  
1935, էջ 101:

<sup>2</sup> Լ. Մելիքսեր-Բեկ, Հայկական հնությունները Թիֆլիսի մո-  
տիկ շրջակայքում. Շավնարադ—Թելեթ—Մավկիսի. «Վրաստանի  
պետ. թանգարանի Տեղեկագիր», № 1, 1922, էջ 92—100 (վրա-  
ցերեն): Л. Меликсет-Бек, К истории удин (Utica-armeniaca),  
«Թրիլիսիի Պետ. համալսարանի Աշխատություններ», XXIII,  
1942, էջ 39, 41:

<sup>3</sup> «Կոռնեկ հայոց աշխարհի», 1860, № 11, էջ 898—922:

Մառնեուլի կամ Լոմթա-գորա գյուղը գտնվում է Թբիլիսի—Երևան երկաթուղային՝ նախկին Սանդար, այժմ Մառնեուլի կայարանի մոտ, վերջինից դեպի Բոլնիս տանող խճուղուն կից, ուր երբեմն վրաց արքայական և իշխանական «մառաններն» էին կենտրոնացած<sup>1</sup>։

Սրա մոտ գտնվում էր Տալավեր գյուղը<sup>2</sup>, որի անունըն ինքնին հետաքրքիր է՝ իբրև առանձնահատուկ, այսպես կոչված, Ստորին Քարթլիի (Քվիմո-Քարթլի) կամ Բորչալու—Սոմխիթի համար, ուր կուտաված են հետևյալ օրինակները վեր վերջավորությամբ. Շուլավեր (Շուրավեր), Մաշավեր, Գելավեր, Կալավեր և այլն։ Այստեղ է և Շավի կամ Մաշավեր (Մաշավ-վեր) գետը։

Ինչ վերաբերում է Սղնախին, նրա հիշատակությունը կապված է «ոստիկանապետ» (գյուղացիստար) Թեյմուրազի անվան հետ, որի անձնավորությունն այլ տեսակետից է հետաքրքիր։ Ստկաջն սրա մասին ստորև։

Շամչի-Մելքոյի ստեղծագործությունը հետաքրքիր է նաև իբրև որոշ արժեք ունեցող սկզբնաղբյուր Վրաստանի պատմության համար։

«Ի վերայ աւերման Տփլիս քաղաքի գալստեամբ Աղալ Մուհեմէդ-խանի» ստեղծագործությունը (մեր ներկա հրատ. № 12), որը պատկերացնում է Թբիլիսիի 1795 թ. 11 սեպտեմբերին տեղի ունեցած ավերումը,

---

<sup>1</sup> Վախուշտի, Նկարագրություն Վրաստանի թագավորության (Վրաստանի աշխարհագրություն), Թբիլիսի, 1941, էջ 46, 48 (վրացերեն)։ Իսսոն Լորքքիփանիձե, Ստորին Քարթլին XVII դարի առաջին քառակուսի, I—II, Թբ., 1935, էջ 326, 458. նույնը III—IV, Թբ., 1938, էջ 404 (վրացերեն)։ Ն. Բերձենիշվիլի, Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար, I, Թբ., 1938, էջ 71 (վրացերեն)։

<sup>2</sup> Վախուշտի, հիշյալ հրատ. 36, Ի. Լորքքիփանիձե, հիշյալ հրատ., I—II, 348, 613, III—IV, 457։

որքան որ այն ականատեսի և հերոսական պայքարում մասնակցողի գրչից է ելած<sup>1</sup>, իհարկե, պատմական սկզբնաղբյուրի արժեք է ստանում:

Այս եղեգներգության կամ ողբին որոշ չափով ձայնակցում է վրացական «Եղեգներգութուն Թբիլիսիի առման մասին», որ հրատարակել է Դ. Չուբինովը<sup>2</sup> և Խ. Աբովյանի «Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի» երկը<sup>3</sup>: Սրանց մեջ բավականին մանրամասն նկարագրված է այն ժամանակվա (մինչ 1795 թ.) Թբիլիսիի նիստուկացն իր առանձնահատկություններով: Թբիլիսիի կենցաղի արտահայտիչն է «Ողբ»-ի 5-րդ տունը, ուր կարդում ենք.

Գախկի ջողած տղեքներ ին, վուր դաստերով ման կուղեին.  
Մեկ-մեկու զարդաշ կոսեին, տես՝ ինչ սիրով ման կուղեին.  
Օվոր կարողութին ուներ, նոքարներով ման կուղեին.  
Գեթխուղա աղա մարթիկըն շախշուրներով ման կուղեին...:

Այս խոսքերը լիովին ձայնակցում են հումորիստական-գովելեշտական խաղերին, ուր տրված է Թբիլիսիի արհեստավորական խավերի բնութագիրը<sup>4</sup>:

<sup>1</sup> Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին աղբյուրների տեսությունը տե՛ս Լ. Սեյիքսեր-Բեկ, Արաշիձենների թափառող կոնքեր. «Վրացական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», հ. 1, 1940, № 1, էջ 779—784: Նույնի՝ Անանուն հայ պատմիչի նորագյուտ երկը Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին, Վերմֆանի Տեղեկագիր, 1941, № 3—4, էջ 45—53: Հմմտ. Շիրինի «Ողբ Թիֆլիսի ավերման (1795 թ.)» և Սեիդ-գադեի հոգվածում՝ «Սով. Վրաստան», 1957 թ. 10 VIII, № 188:

<sup>2</sup> Վրացական ծաղկաքաղ (Քարթուլի քրեստոմաթիա), երկրորդ հրատարակություն, ՍՊԲ, 1863, էջ 130—132:

<sup>3</sup> Խ. Աբովյան, Նախաշավիղ, Երևան, 1940, էջ LXXXIX—XCI. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, IV, Երևան, 1947, էջ 229—230:

<sup>4</sup> Հմմտ. Մ. Մկրյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականության շնտիր նմուշներ, Երևան, 1938, էջ XXXXIII:

Իսկ Թրիլիսիի ավերման բուն նկարագրությանը նվիրված են «Ողբ»-ի 6—8 տունները:

Նմանապես նույն «Ողբ»-ում ռեալ գծերով են ներկայացված, մի կողմից, պարսից շահ Ախտա-խանի, այսինքն Աղա-Մահմադ-խանի և մյուս կողմից՝ Գլանջալի Ջավաթ խանի ու Ղարաբաղի մելիք Մեջլումի կերպարները<sup>1</sup>, որոնց նկատմամբ լավում էր ժողորդի «անեծքը»<sup>2</sup>.

Մելիք-Մեջլումըն շուն դառնա, Ջավաթ-խանը՝ պրստի կուշի, Քաղաքըն վիրանա արին, տեղի շինեցին բայդուշի.

Մելիք-Մեջլումի ազգեմեն մեկ շուն էլ չի հաչի Շուշի:

Հովսեփի կաթողիկոս Արղությանի՝ Պետերբուրգից էջմիածին անցնելիս 1801 թ. փետրվարի 11-ին Թրիլիսի մոտոք դործելու առթիվ է գրված «Ով սրբախաղան Յոսեփ, մինձ կաթուղիկոս» երգը (մեր ներկա հրատ. № 7):

Վրաստանը Ռուսաստանի հետ միանալուց (1801 թ.) հետո պիտի գրված լինեն վրացերեն այն խաղերը, ուր հիշված են Փառնավազ և Վախտանգ արքայազները, որոնց հետ Շամչի-Մելքոն կարող էր կապ հաստատած լինել իր արհեստի բերումով, ասել է՝ նրանց մոմով մատակարարելու գծով:

Սատիրական բնույթ է կրում նաև «Շնորհավորում եմ քեզ, Թեյմուրազ, ռուսիկանապետ դառնալդ» վերնագիրը կրող վրացերեն խաղը, ուր բանաստեղծը առհա-

<sup>1</sup> Բաֆֆի, Նամասյի մելիքությունները (1600—1827), Թիֆլիս, 1882, էջ 148 և այլն, Գ. Շերմազան-Վարդանյան, Նյութեր աղգային պատմության համար. Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 53 և այլն, հմտ. «Մեղու Հայաստանի», 1863, № 14, 16, էջ 143—146, 159—161, Գ. Լևոնյան, Աշուղները և նրանց արվեստը, Լ, Երևան, 1944, էջ 11:

<sup>2</sup> Լեո, Հայոց պատմություն, Նորադույն շրջան, Լ, Երևան, 1926, էջ 121:

սարակ ծաղրում է հասցեակրին, ներկայացնելով վերջինիս իբրև ցարական կառավարութւան հլու աստիճանավորի, մի մարդու, որից բոլորը սարսափում էին:

Սրան զուգահեռ նույն խաղում ուղղակի մատնանշված են Կախիթի 1812 թ. ապստամբութւան հանդամանքները, երբ Թեյմուրազն այսպես կոչված «ավազակներին», այսինքն ապստամբների դեմ էր զործում: Իսկ Թեյմուրազը, ըստ մեր հետազոտութւան, նույն Թամազ Բորուլովը (Բորուլաշվիլին) պիտի լինի<sup>1</sup>:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ 1801 թ. հետո ռուսական ազդեցութւան հետեանքով պիտի բացառել ալն փաստը, որ Շամչի-Մելքոյի ինչպես հայերեն, նույնպես և վրացերեն խաղերում օգտագործված են ռուսերեն բառեր:

Հայերեն խաղերում՝ «գեսետնիկ» (№ 4) — десятник, «յասաուլ» || «յասավուլ» (№ 1, և 1 var.) — есаул, «պոլից» (№ 4) — полиц[ия]. վրացերեն խաղերում՝ «ափիցարի» — офицер, այստեղից՝ «ափիցրորա» — офицерство, «կամանդի» — команда, «մանդիլի» — медаль, «պոլիցմիյատար» — полициймейстер, այստեղից՝ «պոլիցմիյատարորա» — полициймейстерство, «ժալովնա» — жалованье, «ռազրոմնիկի» կամ «ռազրոնիկի» — разбойник, «սուլգաթի» — солдат, «դվարդի» — гвардия, «դուբերնատի» — губернат[ор], «շեփի» — шеф.

Շամչի-Մելքոյի ստեղծագործությունը հետաքրքիր է նաև տաղաչափութւան տեսանկյունով, քանի որ նա իր խաղերի համար օգտագործում է տարբեր ձևեր և տեսակներ. օրինակ՝ հայերենում՝ «գոշամա» (№ 6, 9), «դուբերիզ» (№ 8), «թաւիլիամա» (№ 13), «թեշլիս»

<sup>1</sup> Акты Кавказской Археографической Комиссии, т. I, 1866, стр. 372; т. V, 1873, стр. 84—85.

(№ 7), «մուխամբազ» (№№ 1, 4, 9) և այլն, վրացերեն-  
նում «մուխամբազ», «արթուրլամա», «թախմիս»:

Յնկախ այս բոլորից, Շամչի-Մեղքոյի խաղերը,  
ինչպես Սալաթ-Նովայինը, հարուստ նշույթ են ներկա-  
յացնում Թրիլիսիի բարրաւի ուսումնասիրության հա-  
մար:

Ի դեպ, չի կարելի չնշել, որ եթե այս բարդաւի  
օգտագործման դեպքում Շամչի-Մեղքոյին կանխում են  
Սալաթ-Նովան և Ստեփանոսը, ապա՝ մյուս կողմից  
Շամչի-Մեղքոն կանխում է Ստեփան Ալամդարովին,  
Գալուստ Շերմազան-Վարդանյանին, Սարգիս Բաս-  
տամյանին, Գարրիկի Սունգուկյանին, Հ. Ս. Կուսիկյա-  
նին, Մուրացանին, Աստվածատուր (Բուղդան) Երից-  
յանին և շատ ուրիշներին, որոնք այն օգտագործում  
էին XIX—XX դդ. ընթացքում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Այս աշխատության հիմքում դրված է մեր համապատաս-  
խան զեկուցումը, որ (նախնական խմբագրությամբ) կարդացվեց  
1936 թ. նախ Թրիլիսիում «Հայ արվեստի տան» (Հայարտան)  
զահլիճում մարտի 8-ին, ապա Երևանում Պատմության և Գրա-  
կանության ինստիտուտում ապրիլի 8-ին:

**ՇԱՄՁԻՄ Ե ԼՔՈՅԻ  
ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԸ**

(ՎԵՐԱԿԱՆԳԵՎԱԾ ԲՆԱԳՐԵՐ)



## ԱՆԳԱՃ ԱՐԱ՛, ԳՈՎՔՐԹ ԱՍԻՄ

1. Անգաճ տրա՛, դովքըթ ասիմ,  
տալավրեցի շուն Առաքիլ.  
Բընութինըթ աղվեսի է,  
ինքըթ մե մեկմուն, Առաքիլ.  
Չուստեչուստ [դուն] բարցրանում իս,  
վունցոր մե թըռչուն, Առաքիլ.  
Արի, [դուն] ինձ [էլ] մի սպանի,  
կրտրե սըրտիթ խուն, Առաքիլ.  
Պետկ է վուր [դուն] մերին գընաս,  
շալկով բերիս հուն, Առաքիլ:
2. Մինձ ու մինձ [վուր] պատըռտվում իս,  
հենց գիդենաս՝ շահադա իս.  
Աղգով իսկի [դուն] վունչինչ իս,  
ինքըթ մե անմիղ գադա իս.  
Դըրսեմեն [դուն] հոքիս էրիս,  
տակետակ հարամդադա իս.  
Փուրըթ օցերով լիքըն է,  
քիզ [դիսի] կոսին, թե սադա իս.  
Թե միւր քուչեմեն անց կացար,  
գըլխիթ կոծիմ ձուն, Առաքիլ:
3. Ինչկլի՛ հիմի բարեկամ էինք,  
հիմի էլ չունինք էն սերըն.  
Դուն վուր կեհաս Մառնեուլ[ը],  
քիզ կու սպանե տանուներըն.

Վրեա յասալու [դուն] զըրգեցիր  
 քու էդ քինթ կըտրած ախպերըն.  
 [Թե] վուր [դուն] վրեա շատ բարկանաս<sup>2</sup>,  
 բաւքա [վուր կըտրի իմ խերըն].  
 Լաւութիւնըս [դուն] չիմացար,  
 անիս թողութին, Առաքիլ:

4. Տիս, թե [լիս] քու գովասանքըն  
 ինչպեա շնուրքով [լաւ] շարիլ իմ.  
 Քիզ պեո մարթկերանց պարտք[իր]ը  
 լալով աչկով վըճարիլ իմ.  
 Մառնեուլի ջաղացնիրըն  
 քու գովլաթեմեն ճարիլ իմ.  
 Քիզ էլ շուրերով թաղիլ իմ,  
 վրեթ գութան[ով հենց] վարիլ իմ.  
 Էկար, կըսլով [դուն] ուղեցիր  
 էրիու մանեթ, շուն Առաքիլ:

5. [Դուն] համ կարճ իս, համ անշընուրք,  
 աշխարքումըս չունիս սոյին.  
 [Դուն] շատ ուղում իս բարցրանալ,  
 օչով չի համնում քու բոլին.  
 Արի, ինձմեն ըզգույշ կացիր,  
 լիս քիզ գութամ<sup>3</sup> մեկ [լաւ] օյին.  
 Անմիդ [դուն] լեկամաղ արիր՝  
 էս խիղճ Շամչի-Մելքոյին,  
 Պետկ է վուր [դուն] ճաշը շինիս,  
 զըրգիս դիւի<sup>4</sup> միր տուն, Առաքիլ:

1 Բնագրում՝ ինչկուէլ:

2 » շատ վուր վրեա բարկանաս:

3 » կուգամ:

4 » դիրտ:

1 var.

ՈՒԶՈՒՄ ԻՄ ԹԱՐԻՓԳ ԱՆԻՄ

1. Ուղում իմ թարխիդ անիմ,  
տալավրեցի շուն Առաքիլ.  
Մեղսփուլ կու բարգանաս,  
ունիս էտ փիս զուն<sup>1</sup>, Առաքիլ.  
Քիղիքիդ գովզըվում իս,  
յարաբ ո՛վ իս զուն, Առաքիլ.  
Խասիաթդ աղվեսի է,  
զուն իս խո մեյմուն, Առաքիլ.  
Թե մեկ էլ դեսըն գուքաս,  
զըլխիդ կոծիմ ձուն, Առաքիլ:
2. Մինձումինձ պատըռտվում իս,  
հենց<sup>2</sup> գիդիս թե չահպադա իս,  
Ամա էլ ալում գիդե,  
ինքըդ մե անմիդ գադա իս.  
Աշքարա հոքեվուր իս,  
տակետակ հարամգադա իս.  
Փուրըդ օցերով լիքն է,  
քի օյ կոսե՝ թե սադա իս.  
Յարաբ քիդ ինչ չարա կա,  
վալ էդ քու հոքուն, Առաքիլ:
3. Ութի պես արծաթասեր  
արծան ըլիս ութի դասին.

Դըժուհակի փախ դառնաս,  
մըտիկ տաս կըսյրե կարասին.  
Էնդի գինի չիս ճարի,  
հասրաթ կուլիս լիքըն թասին.  
Թե ասիր համով դուզիմ  
քու պարտեցած ին|ն| արասին.  
Էկար կըսլով<sup>3</sup> ուզեցիր  
էրկու մինալթուն, Առաքիլ:

4. Մեկ քու սուտ լալութիւնն  
հազար թուման գին իս անում,  
Ծուռըն ճանիւի ման դալու  
աչկերումըդ չին իս անում.  
Թափթափուտ շինանում իս,  
հալբաթ գուղութին իս անում.  
Քու անչափ լոթութենեն  
միրկիտանութին իս անում.  
Պետկ է դուն մերին դընաս,  
շալկով կըռիս հուն, Առաքիլ:

5. Ինչոր<sup>4</sup> հիմի խիստ դոստ էինք,  
հիմի կըտրեցիր էն սերըն.  
Յիփոր Մառնեուլ կերթաս,  
քիզ կու տեսնե տանուտերըն.  
Վըրես յասաուլ դըրիր  
էն քու քինթ կըտրած ախպերըն.  
Հազար գուզե<sup>5</sup> բարգանաս,  
չի կանա կըտրի իմ խերըն.  
Իմացի, վուր լիս կուլիմ,  
ցըրաին կըծե լուն, Առաքիլ:

6. Տիս, էս քու թարիփլամեն  
ինչպես լաղաթով շարիլ իմ,

Քիզ արեա մարթկերանց պարթկըն  
 լալ ամանով վըճառիլ<sup>6</sup> իմ.  
 Իրան շուրով<sup>7</sup> թաղիլ իմ,  
 վըրեն գութանըն վարիլ իմ.  
 Մառնեռու ջաղացըն  
 քու դովլաթեմեն ճարիլ իմ.  
 Հա[վ]ուլթինըդ չիմացա,  
 անիս թողուլթին, Առաքիլ:

7. Համ չըտիս, համ նովքիսս  
 բեդասլ ունիս էդ քու սոյին.  
 Ամեն օր օյաղ կացի,  
 մեկ օր լիս քիզ գութամ օյին.  
 Քիզիքիզ բացրանում իս,  
 օչով չէ հավնում քու բոլին.  
 Նըհախ բեդամաղ արիր  
 բեչար Շամչի-Մելքոյին.  
 Պետի է վուր ճաշըն շինիս,  
 տանիս դիբա տուն, Առաքիլ:

- 
- |   |           |                  |
|---|-----------|------------------|
| 1 | Բնագրում՝ | չուն:            |
| 2 | »         | հենձ:            |
| 3 | »         | էկար ու:         |
| 4 | »         | ինչորի:          |
| 5 | »         | գուղե վուր:      |
| 6 | »         | վջարիլ իմ (sic): |
| 7 | »         | շուրերով:        |

ԲԱՐԱԿ ՄԵԶԿԻԹ ՕՍԿԵ ՔԱՄԱՐ-ԲԱՆԴ ՊԻՏԻ

1. Բարակ մեչկիթ օսկե քամար-բանդ պիտի.  
Քու սիրողը քիզ պես դարդիմանդ պիտի:  
  
Քախցըր խոսիս, լիզութ շաքար-դանդ պիտի.  
Միր մեչում[ը] մե օրթում ու անդ պիտի.  
Սիրեկանը գանձ անփրքաւ՞նդ պիտի:  
Անփրքանգ իս աջայիր.  
Զրկա քու մեջ [էլ] այիր.  
Թե [վուր] դուն ինձ մոռացար,  
Շատ կոսիս հայլիմ-հայլիմ:  
Քու սիրողը քիզ պես անփրքանդ պիտի:
2. Քիզ փիանդազ օթախը դարթարիլ իմ.  
Նարինջ-թուրինջ թախչերում[ը] շարիլ իմ.  
Անուշ հուտով մուշկուլու ամբարիլ իմ.  
Քիզ թաղադան ճարիլ իմ  
Սիրտըս հալասարիլ իմ.  
Իմ դուշմանի աչկիրը  
Էրկու ասղով կարիլ իմ:  
Քիզ փիանդազ խալով թաքնաբանդ պիտի:
3. Փըրսանդ զըթնիմ՝ մեկ օր կուլի քիզ ճարիմ.  
Դուն զարափ իս, լիս քի համա մահանդ իմ.  
Շախս<sup>1</sup> ու իսանի պես քիզնից փըրանգ իմ:

Ինչ<sup>1</sup> [համա] փրանգացիք.  
 Էրկու աչկով լացացրիր.  
 Յարտի քիզ ինչ գեթ արի,  
 Ինձ քիզանից հեռացրի:  
 Բու գըթնողի հալրաթ մե փըրսանդ պիտի:

4. [Մե] քանդվի բաղիսիր<sup>2</sup>, լիզուն մընջանա.  
 Բալքամ էնդով էս իմ սիրտըս գընջանա.  
 Ձեռին բըռնած չալի պեակ է փընջանա:  
 Փունջ խըմե, միր տուն արի.  
 Աքա մենակ դուն արի.  
 Ճամփին դուշման շատ[-շատ] է,  
 Մի քընի, դարթուն արի:  
 Բաղիսներու լիզուն բարուրանդ պիտի:

5. Քանդվի բաղիսներու տուն[ըն] ու տիղիր.  
 Էրթան-կորչին, ջընան դերա [գիլի] գիղիր.  
 Հիվընդանան ու չըճարին էլ դիղիր<sup>3</sup>:  
 Դիղուլ սիրտըս դադ շինից.  
 Նա ինձի տուցադ շինից.  
 Շամչի-Մեկքոն փիքք արավ,  
 Մե աջալիր խադ շինից:  
 Շամչի-Մեկքո՛, քիզ էլ ինչ նոխսանդ պիտի:

1 Բնագրում՝ շախաու:

2 » քանդվի բաղիսներու տունը:

3 » հիվընդանան, էլ չի ճարին գիղիր:

ԲԱՐԱԿ ՄԵՉԿԻԹ ՔԱՄԱՐ, ԹԻՐՄԱՆ ՇԱԼ ՊԻՏԻ՝

1. Բարակ մեչկիթ քամար, թիրման շալ պիտի.  
Թե գողալ իս, էրեսիթ մե խալ պիտի:

Լալ սաղ գուքա՝ հաքնիս ատլտս, ալ պիտի.

Մատնըքումը՛ յաղու՛թ, ալմաս, լալ պիտի.

Կանանչ քոշիթ տակըն օսկե նալ պիտի:

Ինձ էրում իս ալերով,

Էտ քու օսկե նալերով.

Գիշիր-ցերեկ չիս բեզրում

Էտքան դալմաղալ[ն]երով:

Քու սիրողը մե Ռոստումի Ջալ պիտի:

2. Իմացիլ իմ՝ ուրիշներուն սիրում իս.

Բաղիփեմեն ինձ մող խաբար բերում իս.

Ինձ քու էշիս կըրակեմեն էրում իս:

Իմացիլ է քալամըն,

Նաղըշքարի դալամըն.

Որոված յարին ուստ էկա,

Էլ չի տալի սալամըն:

Յարի էշխեն սարսարա ման գալ պիտի:

3. Սարսարա իմ, սիրտըս դուզուն դաղ ունիմ.

Ինչ քիզ տեսա, լալ դամաղըս չաղ ունիմ,

Բաղիփեմեն սիրտըս բեզամաղ ունիմ:

Սըրտումս ունիմ տաղիւրըն,  
 Մտն իս գալի բաղիւրըն:  
 Էջսեմեա հիվընդացա,  
 Գինով կոսիմ<sup>1</sup> խաղիւրըն:  
 Յարի հիդ խոսելը<sup>2</sup> լավ խղբալ պիտի:

4. Դուն կարմիր վարժ, լիս<sup>3</sup> մե զարիք բըլբուլ իմ,  
 Քիզ վուր տեսնիմ, ուշկումըտկեմեա կուլիմ.  
 Շամչի-Մելքոն քու<sup>4</sup> գրաւած բանդա-ղուլ իմ:  
 Ինձ պես բանդա-ղուլ ունիս.  
 Դուն մե թալիզուլ ունիս.  
 Բաղումըն ճըկճըկում իս.  
 Լիզուտ մե բըլբուլ ունիս:  
 Քիզ<sup>5</sup> վուր<sup>6</sup> տեսնիմ, զոշով սալամ տալ պիտի:

---

1 Բնագրում՝ կասիմ:

2 » խոսելը

3 » ես:

4 » քո:

5 » քեզ:

6 » որ:

# ԽԱՐԱԶ ԶԱԼԻ՜, ԻՄ ՏԱՍ<sup>1</sup> ՇԱՀԻՆ Ի՞ՆՉ ԱՐԻՐ

1. Խարազ Զալի՜, իմ տաս<sup>1</sup> շահին ի՞նչ արիր.  
 Ճրագուս կերար, իմ թանգիրեն ի՞նչ արիր:  
 Փողոցումըն ման իս գալի դիմի թաքուն.  
 Ի՞նչ սըհաթ<sup>2</sup> ինձ [դուն] ոստ էկար, [անարդ շուն]<sup>3</sup>.  
 Մում<sup>4</sup> հալեցիր, կուլ տրվիր իմ ճրագուն.  
 Մուզգըտ կերար, բաս քու մայեն ի՞նչ արիր:
2. Մում ուղեկիս՝ թալ տրվեցիր, խափեցիր.  
 Էսօր-էգուց գըցելով՝ քիզ թափեցիր.  
 Գիլի նըման իմ ճրագուն լափեցիր.  
 Աշկիրտի ու քարգարի փայն ի՞նչ արիր:
3. Հարցըրեցի աշկիրտին ու քարգարին.  
 Մումս ի՞նչ արիր, ախըր թամամից տարին.  
 Ճրագուն փուխ ըլի ձիր վուրթկերանց չարին.  
 Միջինն տարար, ջըվալիս թայն ի՞նչ արիր:
4. Առաժուտը գընացի դուքանի դուռը.  
 Պարտկանտերիրը բռնիլ էին չուրս կուռը.  
 Էժու շահի հանից-դըրից իմ բուռը.  
 Ինձ խափեցիր, էն մեկ հայուն ի՞նչ արիր:

5. Դանգատելով պոլիցիին իմաց արի.  
Դեսեստնիկ բերի, դուքանը բաց արի.  
Բան վուր չընկեր՝ գըլխին տըվի, լաց արի.  
Շամչի-Մելքո՛, էն դալմադալն ի՞նչ արիր:

---

1 Var. տաս] թե:

2 » սահաթ:

3 » էկար անարդ շուն:

4 » մումը:

## ԽԱՐԱՋԻ ԱԴԱԹՆ Է՝ ԿՈՒ ԿԸՐՄԵ ԿԱՇԻՆ

1. *Խարազի ադաթն է՝ կու կըրծե կաշին.  
Առուտեհան վազ-վազ կու ղըրգե խաշին.  
Օրըն ինչկիլ մութը կու նըստի ուռուղմի-ճաշին:*
2. *Խարազ Ալի, իմ մե շահին ի՞նչ արիր,  
Յիղըս կերար, իմ թանգիրեն ի՞նչ արիր<sup>1</sup>,*
3. *Կուլըվիլ իս գըրքումը.  
Ածկի կուտամ, դեվեր նընգնիս թըրքումը.  
Շամչի-Մելքոն թըքե էտ քու մամի մըրքումը:*

---

<sup>1</sup> Var. *Խաշըս կերար, խաշամանըս ի՞նչ արիր:*

## ՀԱՎԱՏՈՎՐՍ ՀԱՎԱՏԱՄ

1. Հալատուլըս հալատամ,  
Իմ վուտուլըս դամ  
Օրը լիրիք անգամ  
Ժամ, աստվածածին:
  
2. Տանիս արքաութին,  
Տնւր [ինձ] թողութին,  
Քի էրդիրպագութին  
Տամ, աստվածածին:
  
3. Աստված է իմ լարը,  
Նա է իմ ճարը.  
Թուղ լիս քաշիմ դարը,  
Էս դարդ ու սարը:  
Չի քաշի արդարը  
Ղամ, աստվածածին:
  
4. Չոքեցավ ջանիս,  
Ասի հոքիս հանիս,  
Դըրախտը տանիս,  
Թաք ինձ նահախ ջանիս.  
Շուտով չըսպանիս.  
Իմ միղքըս քահանիս.  
Լամ, աստվածածին:

5. Յիս Շամչի-Մելքոն իմ,  
Ինձ նահալս չէրիս,  
Միղավաւրներուն հալատ կու բերիս.  
Համ աշխարիս տեր իս.  
Հում դատամեր իս,  
Համ մարդասեր իս,  
Համ աստվածածին:

Դոշամա

ՈՎ ՍԸՐՓԱԶԱՆ՝ ՅՈՍԵՓ, ՄԻՆՁ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

1. Ոյ սըրփազան՝ Յոսեփ, մինձ կաթուղիկոս.  
Քիզ գովիմ ամենայն ժամ, հոքեվուր տեր.  
Հուսովորչու աղգեն թաջ ու թոմարն իս.  
Քիզ էրգըրպագութին՝ տամ, հոքեվուր տեր:
2. Արեվեկք, արեմուտ, հարավ և հյուսիս,  
Բովանդակ աշխարք թարիփ կանե քիզ.  
Էս չուրս կուլմ Հաուց դուն թաքավուր՝ իս.  
Համ մարմնավուր տեր իս, համ հոքեվուր տեր:
3. Տասն ու մեկն էր թեքերվալի տախը,  
Բովանդակ ուրախացավ քու տխը.  
Քու մուբարաք վուտը հասավ Թիֆլիզը,  
Իրիգնուց ցուլած էկավ համ, հոքեվուր տեր:
4. Շամչի-Մեկքոն ասավ՝ աչքըս թաց լինի.  
Քու աղոթքը վըրես չուրս դիմաց լինի.  
Օղորմության դուռն վըրես բաց լինի.  
Չունիս շափաղաթ իդքամ<sup>4</sup>, հոքեվուր տեր:
5. Յիս<sup>5</sup> Շամչի-Մեկքոն իմ, դու[ն]<sup>6</sup> իս իմ ճարը.  
Յա դու[ն] իս<sup>7</sup> ճար, յիս<sup>8</sup> օտկակարը.

Մեղքոն, Բաղդասար, Շուշան, Մարմարը  
Քու զովլաթով թափիմ, գամ, հոքեվուր տեր:

Թեջիս

---

1 Բնադրում՝ սուրիադան (sic):

2 » էրկրպագութին:

3 » թափալուր (sic):

4 » շափաղաթիդ քամ:

5 » հս:

6 » դու:

7 » դու իս (sic):

8 » հս:

## ՔԱԽԿԵՆ ԳՐՆԱՅԻ ՄԱՌՆԵՈՒԼ

1. Քախկեն գընացի Մառնեուլ,  
նահախ նընգա գալի մեչըն.  
Տեսա կարքով շարած էին,  
գինի չըկեր գալի մեչըն:
2. Ային-օյինը կըցեցին.  
Սըրաուժըս դանակ ցըցեցին.  
Տակըս խալիչեն գըցեցին.  
Կուով լիքն էր խալի մեչըն:
3. Վունց դոնադ ու հուր գիդեին.  
Վունց ախպեր ու քուր գիդեին,  
Ալնի կերակուր գիդեին.  
Համ չըտեսա հալի մեչըն:
4. Արժանի չիմ գըռնաբացին.  
Բեղարիլ իմ ալնի հացեն.  
Թաք պըռծնիմ լիս էս|տ|դանցեմեն.  
Թուղ խիխտըվիմ Շալի մեչըն:
5. Օխտը շափաթ էնդի կացա.  
Հալն ու ափալը իմացա.  
Անմիդ, անգեթ հվընդացա.  
Նահախ նընգա ցալի մեչըն:

6. Շամչի-Մելքոն տեսաւ էրազ՝  
Զուրսը տանեին վազիւլազ.  
Մահեն օրըս պետք է հինգ գազ.  
Կոլորիւմ կըտաւի մեչըն:

Var.

6. Շամչի-Մելքոն տեսաւ էրազ՝  
Զուրսը տանեին վազիւլազ.  
Մահին օրը ճարիւմ հինգ գազ.  
Կոլլվիւմ, էհամ կտաւի մեչը:

Դուբեիդ:

## ԷՍ[Տ]ՂԱՆՅ ԳՐՆԱՅԻ ՄՍ.ՌՆՆՈՒԼ

Էս|տ|ղանց գրնացի Մառնետւ.  
 Նահախ նընգա դավի մեչը:  
 Տակըս խալիչա գըցեցին,  
 Լըվով լիքն էր խավի մեչը:  
 Բերին ու կարքով շարեցին.  
 Գինի չըկեր գավի մեչը:  
 Ալնի կերակուր դիգեին,  
 Համ չըտեսա հավի մեչը:  
 Վունց ախպեր ու քուր դիգեին,  
 Վունց զոնադ ու հուր դիգեին,  
 Վունց գինի ու ջուր դիգեին:  
 Ային~օլինը կըցեցին,  
 Սըրտումը դանակ ցըցեցին:  
 Հինգ կոգ հացի համա  
 Ինձպես ձեռնարացի համա  
 Ինձ գըցեցին կալի մեչը:  
 Նըստիլ իմ դարբըսի ափը.  
 Իմ բաժինը մըսի քափը  
 Էրկու թասանոց է չափը:  
 Մոսկովեն պուքա փընջանը,  
 Կըրակ նընգնի թամարի ջանը,  
 Ինձ գըցիլ է ցավի մեչը:  
 Թաք լիս էս|տ|ղանցեն պըրծնիմ,  
 Թնդ խիխարվիմ Շավի մեչը:

# ՄԵ ՏԱՐԻ ԴԸՆԱՅԻ ՊԵՆՏԵԼԻՆՅ ԲԱՂԸՆ

1. Մե տարի գընացի Պենտելինց բաղըն.  
Ինձ բեղամաղ արիր, Վերու Գողերձի.  
Ինձ էհենց բեղամաղութենի համար  
Թաք փըչացիլ էիր հեռու, Գողերձի:
2. Բարաքաթ չըլի քու արած բանումըն.  
Վերու մեչըն կըտըրվի էդ քու ահումըն,  
Օղուշաղըդ նընդնի Դաղըստանումըն.  
Բոբլիկ վուտով ման գաս դերու, Գողերձի:
3. Դուն խոմ ցանկացիլ իս թամահութենին,  
Համ սուլթանութենին, համ շահութենին.  
Տեսնիմ՝ դուն հանդիբիս հաց-թանգութենին,  
Ծիրաըն պըտրում [ը]լիս մերու, Գողերձի:
4. Քու օրումըն չր ոաստ գաս մե լավ բարու,  
Համաշա հանդիբիս դուն անբախտ չարու.  
Էշըդ վիկալնիս դուն, էհաս սարու.  
Բարով էլ վուչ հիդ գաս մերու, Գողերձի:
5. Դուն իմ սիրաըն դուգուն արիր, դադ արիր.  
Ծիծաղեցար, ուրախացար, խալ արիր.  
Քու Շամչի-Մելքոյին բեղամաղ արիր.  
Հալբաթ էկիլ էր քու սերու, Գողերձի:

თეჯლისია  
[მხეღის ხ]

ՈՎ ՎԱՐԹ, ՅԻՍ ԻՄ ՔԻՉ ՄՈԴ ԳԱԼՈՒ

1. Ով վարթ, յիս իմ քիզ մոդ գալու.  
Դուն մի լացի, յիս իմ լալու.  
Քու էշխեմեն քաղաք գալու,  
Շուրջ ու բոլորը ման գալու:
2. Խեղճանումըտ ման իմ դալի.  
Իմանում իմ չում իս լալի.  
Հուարս խիստ ահուշ է դալի.  
Մուխ իս աալի զարմանալի:

ՔՈՒ ԷՇԽԵՄԵՆ ՀԻՎԱՆԴԱՅԱ, ԱՅ ԳՈԶԱԼ

1. Քու էշխեմենն հիվանդացա, ալ գողալ,  
 Պատկիրքդ գովելի է, անհրման իս դուն:  
     Անման իս, ալ գողալ,  
     Իսկի չունիս թալ գողալ,  
     Քու էշխեմենն էրվում իմ,  
     Յիս կանչում իմ վալ, գողալ:  
 Խափանդնիրդ սըրտիս դիբավ, չալ գողալ.  
 Էդ քու նազով թաք իմ հոքին հանիս դուն:
- 2[1]<sup>1</sup>. Հոքին հանիս, արի՛ ինձ մե ռահմ արա՛.  
 Բեմուրվաթ քո ձևնեմեն կանչում իմ հարա:  
     Սիրալս արիլ իս յարա,  
     Ջիգարըս՝ փարա-փարա,  
     Էդ քու անուշ խոսքիրըն  
     Աշխարհքին բարեբար ա:  
 Արի՛, գողալ, էլ մի ման դա հավարա.  
 Ուր վուր գընաս, ինձի հիդըտ տանիս դուն:
- 3[2]<sup>2</sup>. Հիդըտ տանիս նոքարի պես, դուլիպես,  
 Ծուցումըս պահիմ քիզ թալիդուլի պես:  
     Կըլիլըում իս կուլի պես,  
     Խոսում իս բուլբուլի պես.  
     Անուշ ձենըդ չիմ լըսում,  
     Յիս դառիլ իմ խուլի պես:

Խափանգնիրըդ սըրտիս զիբավ գուլլի պես,  
Խընդրում իմ, վուր եղպես բան ել չանիս դուն<sup>3</sup>:

4. Էղպես բան ել չանիս, Թազա ջիվան իս,  
Ծուցըդ բաղչա բաղ է, ինձ սելր տանիս:  
Մազով հոքիս կու հանիս,  
Մըկում աուն հոքեհան իս.  
Շամչի-Մելքոն խընդրում իմ<sup>4</sup>  
Ինչ կուլի մե ոահմ անիս:  
Նազ չըծախիս, ինձ վըրեն նազ չանիս,  
Շամչի-Մելքոն է, դարտ բիլան իս<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Ըստ «Հայ աշուղներ»-ի 1937 թ. հրատ.՝ առաջին տունն է, ըստ Ա.ս. Մնացականյանի՝ երկրորդը:

<sup>2</sup> Ըստ «Հայ աշուղներ»-ի 1937 թ. հրատ.՝ երկրորդ տունն է, ըստ Ա.ս. Մնացականյանի՝ երրորդը:

<sup>3</sup> Այս տողը չկա «Հայ աշուղներ»-ի 1937 թ. հրատարակության մեջ:

<sup>4</sup> 1 և 4-րդ տունները չկան «Հայ աշուղներ»-ի 1937 թ. հրատարակության մեջ:

Ի ՎԵՐԱՅ ԱԻՆՐՄԱՆ ՏՓԽԻՍ ՔԱՂԱՔԻ ԳԱԼՍՏԵԱՄԲ:  
ԱՂԱՅ ՄԱՀԷՄՄԷԴ-ԽԱՆԻ

1. Էհա ու հարգիղ չըգա  
էն թալուր զաման<sup>1</sup> քաղաքիս.  
Հարիր<sup>2</sup> հաղար մարթով էկավ  
էս Գուրշխտան քաղաքիս:

Պարսից մի անիծյալ դուրս ընդավ<sup>3</sup>  
դուշման քաղաքիս.  
Մամադ խանը էկավ տըվալ  
մի նիդամներ էս քաղաքիս.  
Շսիր անող, կըրակ տըվող  
չէր մի զաման քաղաքիս.  
Հարիր հաղար մարթով էկավ,  
չկարած<sup>4</sup> տանկ քաղաքիս:

2. Մեւիք-Մեջլումըն շուն դառնա,  
Ջալաթ-խանըն՝ պըստի կուշի,  
Քաղաքըն վիրանա արին,  
տեղի շինեցին բալլուշի.  
Մեւիք-Մեջլումի ազգեմեն  
մեկ շուն էլ չի հաչի Շուշի.  
Թանգ դոշուն ինք մող արի<sup>5</sup>  
Խեսուր, Չարյաք, Թուշի.

Աջեիք չալիշ գուքան<sup>6</sup>,  
կուլին<sup>7</sup> միզան քաղաքիս:

3. Ախտա-խանի գալըն իմացանք,  
մինք ասում ինք՝ շահ էկավ.  
Թե չէ քաղաքըն քանդելու<sup>8</sup>  
տասն հազար թի ու բահ էկավ.  
Բերթեցիք ասում էին՝  
միզ համա կըրլեդլահ էկավ.  
Նըրա վուտն չար նըշան էր,  
ազար<sup>9</sup>, սով, իժում մահ էկավ.  
Մընացողին դադում արին,  
[ն]ընգավ բարեբան քաղաքիս:

4. Քաղկեմեն տարած եսիրն  
վնւրն Արաբիստան է հասի.  
Վնւրն Շաքի, վնւրն Շիրվան,  
վնւրն Դաղխստան է հասի.  
Վնւրն Ղուբա, վնւրն Բաքի,  
վնւրն Դարբանդ է հասի.  
Վնւրն Թավրիզ, վնւրն Թեյրան,  
վնւրն Սորաստան է հասի.  
Նըրանց նաչար հերըն ու մերըն,  
վնւր մեկը<sup>10</sup> վաչ տան քաղաքիս:

5. Քախկի շոգած արդեքնիր ին,  
վուր դաստերով ման կուգին.  
Մեկ-մեկու դարդաշ կոսին,  
տես՝ լինչ սիրով ման կուգին.  
Օվոր կարողութին ուներ,  
նոքարնիրով ման կուգին.  
Քեթխուդա ադա մարթիկըն  
շախշուրներով<sup>11</sup> ման կուգին,

Նրանցմէն մեկն էլ չիմ տեսնում  
հիմի մե նըշան քաղաքիս:

6. Քաղաքըն վուր նեքսե էկալ  
հարիր հաղար զըզըլքաշըն,  
Մեկ-մեկուց ալրիմիշ արին  
գիփ մեաի դովում դարդաշն.  
Քահանեքը շունն էր ուտում,  
վուչ մեկը<sup>12</sup> չը մտալ նաշըն.  
Գետի պես արին էր գընում,  
բոստան էր աթմորթու լաշըն,  
Վուրթին<sup>13</sup> մորիցըն ին խըլում,  
էլ սուք ու շիվան քաղաքիս:

7. Հաղար էրկու հարիր քառսուն<sup>14</sup>  
ու չուրս թըվին [ն]ընգալ գերի.  
Վարթապիտնիր կոտորեցին,  
լեշ էր ածած տերտերի.  
Ապրանք, մալ ու գովլաթ տարան<sup>15</sup>,  
թաք տընիրն չէին էրի.  
Քաղաքըն ավիրվելու օրն  
տասն ու մեկն էր սեպտեմբերի.  
Քրոնիկոնումն նըստած էր  
Ուն ու Պարն ու Գան քաղաքիս:

8. Յիս մե տան դալիմացա<sup>16</sup>,  
հենց գիւացի հերըս տարան.  
Մերըս ձեռնեմես խըլեցին,  
շուխտ քուր, շուխտ ախպերըս<sup>17</sup>  
տարան.  
Հորըս թրով ըսպանեցին,  
հսիր արին մերըս՝ տարան.

Շամչի-Մելքոն շատ լաց էլում,  
 ասում՝ վուրթիս ձեռես տարան.  
 Վից դըղըլթաշ ըսպանեցի,  
 մին էլ մե մեծ խան քաղաքիս:

- 
- 1 Բնադրում՝ զարման:
  - 2 » հարյուր:
  - 3 » ընկալ:
  - 4 » չի կարաց:
  - 5 » մոտ արել:
  - 6 » կուգին:
  - 7 » կու լինին:
  - 8 » քանդել:
  - 9 » աղալ:
  - 10 » որ մինն:
  - 11 » չախշուրներով:
  - 12 » ոչ մինն:
  - 13 » որդին:
  - 14 » քառասուն:

15 «Ապրանք ու մալ ու դովլաթ ին տարի: Ուղղում ենք  
 ըստ վարիանտների:

- 16 Բնադրում՝ զալ իմացա (sic): Նույնը:
- 17 » ջուխտ քուր ու ախպերս: Նույնը:

Ի ՎԵՐԱՅ ԱԻԵՐՄԱՆ ՏՓԽԻՍ ՔԱՂԱՔԻ, ԳԱԼՈՒՍՏԵԱՄԲ  
ԱՂԱՅ ՄՈՒՀԱՄԵԴԻ ԽԱՆԻ

1. Պարսից մե անիծլալ զարմը  
լուսն ննդալ զուշման քաղաքիս,  
Հարուր հաղար մարդուլ էկալ  
նիրս Գուրջըստան քաղաքիս,  
Ասում էինք աղա Մահմադ-խանը  
կըզա կուտա մե նիզամ քաղաքիս,  
Եսիր անոզ, կրակ տըվոզ  
կեր մե Զալաթ-խան քաղաքիս,  
Էհա ու հարզիզ չը դա  
էս թաուր զաման քաղաքիս:

2. Ախտա խանի դալն իմացանք,  
մենք ասում ինք թե շահն էկալ,  
Թե չէ քաղաքն քանդելու  
տաս հաղար թի ու բահն էկալ,

---

\* Դրքույկը տպագրության էր հանձնված, երբ լույս տեսավ Հ. Սահակյանի հոդվածը (տե՛ս էջ 20, 22), որտեղ և հրապարակված էր այս բանաստեղծությունը Մատենադարանի ձեռագրերում եղած տարրերակների համեմատությամբ, ուստի նպատակահարմար գտանք բանաստեղծությունը նույնությամբ, միայն առանց այլընթերցումների, որպես տարրերակ, հրապարակել այստեղ:

Բիրդըցիքն ասում էին  
մեզ ամա դրլադյահ էկաւ,  
Նրա ոտն շխամիան էր,  
ջեր սուլը, իժում մահն էկաւ,  
Մնացածն էլ դաթլ ամ արաւ,  
ննգաւ բարիբան քաղաքիս:

3. Քաղաքը որ ներս էկաւ  
հարլուր հաղար զզլբաշը,  
Մեկ մեկումեն ջոյեցին  
ողջ մետի դոհում զարդաշը,  
Քահաններուն շունն էր ուտում  
ոչ մինը չմտաւ նաշը,  
Գիտի պես արլուն էր գնում,  
բոստան էր աթմորթու լեշը,  
Որդին մորիցն էին խում,  
էր սուգ ու շիւան քաղաքիս:

4. Մեկիք-Մեջլումն շուն դառնա,  
Ջաւաթ-խանը պատի գուշի,  
Քաղաքը վերանա արին,  
տեղ շինեցին բալիդուշի,  
Մեկիք-Մեջլումի ազգեմեն  
մեկ շունն էլ չը հաչի Շուշի,  
Թաք դոշուն էինք մոդ արի՝  
Խևսուր, Փշաւ, Չերքեզ, Թուշի,  
Աջալիբ չալիշ գուքեին,  
կօզնեին մե բան քաղաքիս:

5. Քիչ իքմնով չէր տեհնալի,  
ով ուզում էր նրանց տիսը,

Իրանց գլխու գառիլ էին  
 Թիֆլիզու քուլու վարիսը,  
 Մատղըշնիրուն էլ գըրոտում էր  
 մորիցէ մամասախլիսը,  
 Առաջ Գոչորոն վիր նընգնի,  
 Իժում իր լաշքար էրիսը:  
 Գա դալամն ձեռին բոնե,  
 հիմի տեհնե սան քաղաքիս:

6. Հազար հրկու հարյուր քառասուն  
 ու չուրս թըլին նընգան գերի,  
 Վարդապետներ կոտորեցին,  
 լեշիր էր ածած տերտերի,  
 Ապրանք, դովլաթ, մալն տարան,  
 էրնեկ տներն չէին էրի,  
 Քաղքի ավիրվելու օրն  
 տասն ու մեկն էր սեպտեմբերի,  
 Քրոնիկոնումը նստած էր  
 Ուն ու Պարն ու Դան քաղաքիս:

7. Քաղքեմեն տարած հսիրը,  
 որն Արարստան է հասի,  
 Որն Բաղդադ, որն Բասրա,  
 որն Իսպահան է հասի,  
 Որն Փաշան, որն Թեհրան,  
 որն Խորասան է հասի,  
 Որն Շաքի, որն Շիրվան,  
 որն Դաղստան է հասի,  
 Նրանց անճար հերն ու մերն  
 որ մեկին վալ տան քաղաքիս:

8. Ով քաղքեմեն հսիր տարավ,  
 զիվի մե մեկ մաթահը ջոգեց,

Ով որ փախած տեղեն էլալ,  
էն էլ մե մեկ մահը ջոգեց,

. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .

Ոնց մե շահել տղա չը պրծալ,  
ոնց մե նովջվան քաղաքիս:

9. Ուր ին քաղաքի ջոգած տղերքն,  
որ դաստերով ման գուքեին,  
Մեկ մեկու տղաքեր ասելով,  
տես ինչ սերով ման գուքեին,  
Քիթխուղա տղա մարդիքը  
չաղչուրներով<sup>1</sup> ման գուքեին,  
Ով որ կարողութուն ունէր  
նոքարներով ման գուքեին,  
Երանցմեն մեկն էլ չեմ տեսնում  
հիմի մե նշան քաղաքիս:

10. Ես մե տանը դայիմացա,  
հենց գիգեցա հորըս տարան,  
Հորըս թրով սպանեցին,  
եսիւ արին մերըս տարան,  
Մերս ձեռնեմես խեցին,  
ջուխտ քուրս ու ախպերս տարան  
Շամչի-Միլքոն շատ լաց էլալ,  
ասալ սրտիս ծերն տարան,  
Վեց զվրա՜ սպանեցի,  
մին էլ մե մեծ խան քաղաքիս:

---

<sup>1</sup> Ուղղելի՛ շախշուրներով:

2.  
(1-3)<sup>1</sup> Մեկիք-Մեջլումը շուն դառնա.  
Ջավատ-խանը՝ պստիկ կուշի...  
Մեկիք-Մեջլումի ազգեմեն  
Թող չըմնա մեկը Շուշի:

\* \* \*

2.  
(1-5)<sup>2</sup> Մեկիք-Մեջլումն շուն դառնա,  
Ջավադ-խանը պստի քուշի.  
Քաղաքը վերանա արին,  
տեղը շինեցին բալդուշի.  
Մեկիք-Մեջլումի ազգիցը  
մեկ շուն էլ չհաչի Շուշի.  
Էրենեկ դռշուն էինք մոտ արի՝  
Խեսուր, Փշավ, Չերքեզ, Թուշի,  
Իհարկե, չալիշ կուգալինք,  
կոնեինք մեկ բան քաղաքիս:

\* \* \*

5.  
(1-5)<sup>3</sup> Ո՞ր ին քաղկի շոգած տղեքըն,  
վուր դաստերով ման գուքեին.  
Մեկ մեկու ախպեր տսելով,  
տիա լինչ սերով ման գուքեին.  
Քեթխուդա-աղա մարթիքը՝  
չախչուրներով ման գուքեին.  
Օվոր կարողութին ուներ՝  
նոքըրներով ման գուքեին.

Նըրանցմէ մեկն էլ չիմ տեսնում  
հիմի մե նըշան քաղաքիս:

\* \* \*

7.           Հաղար էրկու հարյուր  
(1—5)<sup>2</sup>           քառասուն չորս թվին ընկան գերի.  
Վարդապետներին կոտորեցին,  
          լեշ էր ածած տերտերների.  
Ապրանք-դուլլաթ-մալը տարան,  
          էրնեկ տներ չէին էրի.  
Քաղքիս ավերելու օրը  
          տաանըմեկն էր սեպտեմբերի.  
Քրոնիկում նստած էր  
          ուշը, պարն ու դան քաղաքին:

\* \* \*

[Տեսեք՝ ինչ բարկություն ըլալ  
          աստվածածնա կամով քաղաքիս.  
Հայտնի է հպարտութեամբ  
          ամենայն բանով քաղաքիս.  
Մեղքն ու վարձը հաղթել է  
          մեկը զորեղ ջանով քաղաքիս]:

6.           Քաղաքը որ ներքե կկան,  
(1—5)           հարյուր հաղար զղլրաշ էր.  
Մեկը մեկուց ալբըմիշ արին,  
          զիւի մետին խոհուն զարդաշ էր:

4.           Քահանեքը շունն էր ուտում,  
(2,4,5)           ոչ մեկը չմտալ նաշը,  
8.           Գետի պես արյուն էր հոսում,  
(1,3—5)           ջանդակ էր աղմորդու լաշը,

Որդին մորիցն էին խլում,  
էլ սուգն ու շիվան քաղաքիս:

Քաղաքից տարած հսկրը,  
որը Դաղստան էր հասել,  
Որը Բաքի, որը Ղարս,  
որը Արարատան էր հասել  
Նրանց նաչար հերն ու մերը  
որ մեկն էլ վալ տան քաղաքիս:

Էսենց մե տան զալ լմացա,  
հենց գիլեցա մերս տարան.  
Հորս թրով սպանեցին,  
ջուխտ քիր ու հղբարս տարան.  
Շամչի-Մեկքոն շատ լաց ըլավ,  
ասավ որդիս ձեռես տարան.  
Վեց զվրաշ սպանեցի,  
մեկ էլ մի մեծ խան քաղաքիս:

---

<sup>1</sup> Ըստ Բ ա ֆ ֆ ի ի (1882):

<sup>2</sup> Ըստ Գ. Շ ե ը մ ա գ ա ն - Վ ա ը դ ա ն յ ա ն ի (1890):

<sup>3</sup> Ըստ Գ. Ա խ վ ե ը դ յ ա ն ի (1852):

<sup>4</sup> Ըստ Բոգդանովիայի շրջանի Դիլիֆ գյուղի (Վրաստան)  
կոլտնտեսական Արամ Ս ա ը ու խ ա ն յ ա ն ի, որն այդ երգը լսել  
է իր հորից՝ Հովհաննեսից, որ իր ժամանակ հայտնի պատմող է.  
եղել զյուզուզ (ղրի է առել Ն ը վ ա ն դ Դ ա լ ճ յ ա ն ը):

## ԱՎԱԼԻ ԲԱՇՏԱՆ ՔԻՉ ԳՈՎԻՄ

1. Այլալի բաշտան քիզ գովիմ,  
 իժում բաղ ու բաղչադ, Թեկէթ.  
 Սեյրանգահըդ գովելի,  
 անուշ է բուլաղդ, Թեկէթ:

Մեռնիմ քու օղորմութիւնին,  
 աշխարքս չիկա քու թայն,  
 Դիվունանքս քիզ կու ավտանք՝  
 վուրն վրացի, թուրք ու հայն,  
 Որը խունկն ու մում կու բերի,  
 որն արասին ու շահին.  
 Կարող իս դու[ն], կու փրկիս  
 չոլախին ու կաղին, Թեկէթ:

2. Քու դուն համփուրելու  
 շատ համքար ու տանաֆ կուգա.  
 Մեռնիմ քու օղորմութենին,  
 շատ աղավնի ու հավ կուգա.  
 Վուրը տավար կու բերե,  
 շատ օչխար ու գառ կուգա.  
 Թե վուր դու[ն] հաճո կուլիս,  
 կու կտրին մատաղն, Թեկէթ:

3. Քախկի աղերքն մող կուլին,  
 դիւի միանա թաղով կուգան.  
 Ռանգեռանդ ձիաներով  
 օսկե չարաղնածով կուգան.  
 Մոնթիրն քախցր ձենով  
 շարական ու տաղով կուգան.  
 Համբարցումի չորեքշաբթին  
 կու կապինք իրդարն, թեւեթ:

4. Ասում ին՝ սաղով կոսիմ,  
 լիս էս խաղն նաղով կոսիմ.  
 Չուրս խանա թարխիլամեն  
 էսպես մուխամբաղով կոսիմ.  
 Թիֆլիզու Շամչի-Մելքոն  
 համաշա սոյրաթով կոսիմ.  
 |Սեյրանգահըդ Կովեւի,  
 անուշ է բուլաղդ, թեւեթ|:

Մուխամբաղ

## ԴՈՒՆ ԱՆՆԸՄԱՆ ԻՍ

1. Դուն աննըման իս,  
Թաղղա ջիւտն իս,  
Իմ աղիւղ ջան իս:

Սուլթան ու խան իս,  
Կուզիս հոքմ անիս,  
Իմ հոքիս հանիս:

Հոքիս քիզի սադաղա,  
Ջանըս քիզի մատաղ ա,  
Արի գընանք միւր բաղը,  
Ա՛խ, ի՞նչ կուլի, յմր, յմր:

2. Մարալ ու ջեյրան,  
Ե՛կ գընանք սեյրան.  
Յիս քիզ հեյրան.

Քիզամա զուլ իմ.  
Շեյդա բըլբուլ իմ,  
Անըմիտ դուքբան:

Ղուքբան ծոցիդ նըռանը,  
Հարդիդ ինձ մի մոռանա.  
Ինձ պահիր քո գըռանը,  
Որպէս զուլի, յմր, յմր:

3. Շամչի-Մելքոն իմ,  
Լավ իմ թե մոն իմ,  
Ինչ վուր իմ, քոնն իմ:

Վերչ տհւր քո նազին,  
Անգաճ տհւր սազին,  
Իմ մուխամազին:

Մուխամազ իս քախցըր  
հանդ,  
Դու[ն] իմ հոքի, դու[ն] իմ  
կյանք.  
Արի մոտըս, քանի կանք,  
Սաֆա էլի<sup>1</sup>, լմր, լմր:

---

<sup>1</sup> Բնագրում՝ վելի:

# ՄԵ ՏԱՐԻ ԳՐՆԱՅԻ ՉԻՔԱՆԻՆՅ ԲԱՂԸ

1. Մե տարի գընացի Ձիթախինց բաղը,  
Յիս էսինց վերանա բաղին լճնչ անիմ.  
Օրը տասն ու հինգ գամ կըռիվ ին գալի.  
Կուղոին ջուղաբ տամ, կաղին լճնչ անիմ:
2. Տոտը բարակիլ է, չէ բանում չարիւր,  
Շատ իմ չալիշ գալի, չէ գալի արխը<sup>1</sup>,  
Թամաշա ին գալի վուղչ քաղկի խալխը,  
Յիս էլ նըստիմ ջըրի դրաղին լճնչ անիմ:
3. Տարին բարգաշտ<sup>2</sup> էլալ, չէկալ սահաբին<sup>3</sup>,  
Ծառիը չորացալ, չէրիտ գուլարին<sup>4</sup>,  
Վճենց պետկ է մըտիկ տամ չուրս ծառ ունարին.  
Յիս իմ նաչար օղլուշաղին լճնչ անիմ:
4. Բուխկը գըլուխ չէրիտ, չէկալ գազարը.  
Էս բաղը գըցիլ է իմ ջանն ազարը.  
Կանանչի էլ չըկա՝ դըրգիմ բազարը.  
Յիս իմ տարեկուսած աղին լճնչ անիմ:
5. Ղոզնոշոն ասալ՝ դարբեդիարը  
Ուզում իմ գընա. փախչի չընդու դիարը.

Հիգնուհիւք կուտլտացալ խիարը,  
Մըտիկ տամ, էս չուր, չուր թաղին ի՞նչ անիմ:

---

<sup>1</sup> Ըստ Աս. Մ'ն ա ջ ա կ ա ն յ ա ն ի՝ «Շատ չալիչ էկանք, չը  
դուս էկալ արխը»:

<sup>2</sup> Բնագրում՝ բարաստ:

<sup>3</sup> Ըստ նույնի՝ քէքիտ սհաբին»:

<sup>4</sup> Ըստ նույնի՝ «Ծառիք չորցիլ է, չէկալ գուլաբին»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



## Բ Ա Ռ Ա Ր Ա Ն<sup>1</sup>

Աբասի (1 var., 3, 13, 1)<sup>2</sup>—պարսկական արձաթի դրամ, հա-  
վասար չորս շահու, վրացական հին՝ արձաթի դրամ՝  
նույնպիսի արժողությամբ:

Ադար (5, 1)—ծես, սովորություն:

Ազար (15, 4)—վիշտ, նեղություն, տանջանք, հիվանդու-  
թյուն:

Արմորթի (12, 6)—ադամորդի, մարդ:

Ալ (3, 1)—վառ կարմիր, կակաչագույն կարմիր:

Ալում=ալամ (1 var., 2)—աշխարհ. տե՛ս էլ ալում:

Ալնի (8, 3, 8 var.) —ալանի, անալի:

Ածկի (5, 3)—աքացի:

Այիբ (2, 1)—թերություն, արատ, ամոթ:

Այից-այից (8, 2, 8 var.)—փոխ. նշանակությամբ՝ երկրորդա-  
կան, մանր-մունր իրեր:

Այրիմիշ (12, 6)—անջատ, բաժանված:

Անգեր (8, 5)—անգետ, միամիտ:

Անդ (2, 1)—երգում:

Անիրսանդ (2, 1)—անառիթ:

Աշբարա (1 var., 2)—ակնհայտ, բացահայտ:

Աջայիբ (2, 1, 5) կամ աջեիբ (12, 2, 12 var. 4)—զարմանա-  
լի, հրաշալի, արտասովոր:

Ասնաֆ (13, 2)—արհեստավոր դաս:

Ավալի բաշտան (13, 1)—սկզբից, էն գլխից:

<sup>1</sup> Բառարանը ստուգել է ճշտել է ընկ. Բ. Չ ու դ ա ո դ յ ա ն ը:

<sup>2</sup> Փակագծերի մեջ տրված թվերից թավը ցույց է տալիս  
խաղի թվահամարը, իսկ սովորականը՝ տվյալ խաղի հերթական  
տունը:

Ատլաս (3, 1) — Էրբալս, աթլաս, սնդուս (սաթին):  
Արլս (15, 2) — առու:

Բագար (15, 4) — շուկա:

Բալբա (1, 3) Կամ Բալբամ (2, 4) — գուցե, թերևս:

Բաղչա (13, 1) — սարտեղ, ծաղկանոց, բանջարանոց:

Բայիդուշ (12, var., 4) — տե՛ս Բայդուշ:

Բայդուշ (12, 2) — բուռ:

Բանդ (2, 1) — Կապ, հանգույց:

Բանդա (3, 4) — գերի, ստրուկ, ծառա. փոխ.՝ նվաստա:

Բաշտան (13, 1) — տե՛ս ավալի բաշտան:

Բարաքար (9, 2) — օրհնություն, լիություն, հաջողություն:

Բարգաշտ (15, 3) — վերադարձ, բարգաշտ էլավ — ետ դարձավ:

Բարեբաճ-Բարիբան (12, 3, 12 var. 2) — օրհներգական, դու-վասանական:

Բարեբար (11, 2) — հավասար:

Բարուբանդ (2, 4) — Կապանք:

Բեդամադ (1, 5, 1 var., 7, 3, 3, 9, 1, 5) — անտրամագիծ, վշտացած, վիրավորված, նեղացած:

Բեդասլ (1 var., 7) — չարածնունդ, անաղնիլ, ստոր:

Բեմուրվար (11, 2) — անխիղճ, անդուլթ, անողորմ:

Բեչար (1 var., 7) — անչար, համառ. նաչար:

Բիլան (11, 4) — խմացող:

Բուլաղ (13, 1) — աղբյուր:

Դագ (3 var., 6) — երկայնության սլարսկական չափ, հավասար 112 սանտիմետրի:

Դան (12, 7, 12 var., 6) — վրաց. երեք:

Դանա (2, 1) — վրաց. միթե:

Դեք (2, 3) — ֆուս, սխալմունք:

Դոգալ (3, 1, 11, 1) — գեղեցիկ, գեղեցկուհի:

Դուլաբի (15, 3) — տանձ:

Դուլլա, սեռ. գուլլի (11, 3) — զնդակ:

Դուշ (12 var., 4) — զուշ, կուշ, քուշ:

Դաղ (2, 5, 3. 3) — խաբան, խոց. փոխ.՝ կսկիծ, սրտի վերք:

Դամաղ (3, 3) — քիմք. դամաղը չաղ — ուրախ, զվարթ:

Դաստ (12 var., 9) — տե՛ս դաստա:

Դաստա (12, 5)—խումբ:

Դավա, սեռ. դավի (8, 1)—վեճ, կռիվ:

Դատամեր (6, 5)—բառացի՝ դատավորի մայր (իմա՝ Քրիստոսի մայր):

Դար (6, 3)—զլուխ, դադաթ, լեռնալանջ, փոխ՝ դժվարություն:

Դարբեդիար (15, 5)—երկրե-երկիր, թափառաշրջիկ:

Դարդիմանդ (2, 1)—ցավակից, բարի, ազնիվ:

Դեսեռնիկ (4, 5)—տասնապետ:

Դեվեր (5, 3)—գեղի վար, ցած:

Դընջանալ (2, 4)—հանդստանալ:

Դիար (15, 5)—ապարանք, գավառ, երկիր:

Դիրա (1 var., 7, 2, 5)—գեղի:

Դիփ (1, 5, 4, 1, 13, 3)—բոլորը, բոլորովին:

Դիփունանք (13, 1)—բոլորը, բոլորեքյան, ամբողջը:

Դոստ (1 var., 5)—բարեկամ, սիրելի:

Դովլար (1 var., 6, 12 var., 6)—հարստություն, պետություն:

Դոնբաց (8, 4)—հայոց եկեղեցու. համապատասխան արարողությունը, երբ մեծ պատին՝ Գրիգոր Լուսավորչի, Ծաղկազարդի և Ավետյաց տոները նախորդ օրն երեկոյան ժամերգության պահին (նախատոնակին) սեղանի վարագույրը բաց են անում հաջորդ օրվա «բաց» պատարագի համար: Այսպես է կոչվում նաև Ծաղկազարդի երեկոյան կատարվող արարողությունը՝ «գոնբացեք»:

Դուգուն (3, 3, 9, 5)—հանգույց, փոխ՝ վերք, խոց:

Դուշման (2, 2, 4, 12, 1, 12 var., 1)—թշնամի:

Եսիր (12, 1, 4, 8, 12 var., 1, 7, 8)—գերի:

Զաման (12, 1, 12 var., 1)—ժամանակ:

Զառափ (2, 3)—գրամահատ:

Էլ (1 var., 2)—ժողովուրդ, ցեղ:

Էլ ալում (1 var., 2)—գարձվածք է՝ համայն աշխարհ:

Էհալ (12, 1)—երթալ, գնալ. էհա՛—գնա՛:

Էշխ (3, 2, 3, 10, 1)—սեր:

Թագադան (2, 2)—նորից, կրկին:

Թագա (14, 1)—նոր, թարմ:

Թափրավուտ (1 var., 4)—արագ:

Թալ տալ (4, 2)—գաղտադողի կերպով կամ խաբելով գնալ, հեռանալ:

Թախչա (2, 2)—որմնախորշ:

Թաղ (15, 5)—գետնատարած բույսի թուփ, ճյուղ:

Թամահուրեն (9, 3)—աղահուլթյուն:

Թամաշա (15, 2)—տեսարան, հանդես:

Թայ (13, 1)—հատ, հավասար, միաչափ, ընկերակից, հասակակից, նման:

Թայիգուլ (3, 4, 11, 3)—փունջ:

Թանգիրա (4, 1, 5, 2)—կաթսա:

Թաջ ու բումար (7, 1)—թագ, պոսակ:

Թաս (1 var., 3, 8)—զավաթ, բաժակ:

Թարիփ (1 var., 1, 7, 2)—գովք, գովասանք:

Թարիփլամա (1 var., 6)—գովերգություն:

Թաք (8 var.)—միայն:

Թաքնաբանդ (2, 2)—նկարած թաղիք:

Թեքերվալ (7, 3)—վրաց. փետրվար:

Թիրմա (3, 1)—նրբագործ:

Թոմար (7, 1)—տե'ս քաջ:

Թուրինջ (2, 2)—նարնջենու մի տեսակը (citrus vulgaris).

Իդբամ (7, 4)—այգեքան:

Իժոււմ (13, 1)—հետո:

Իդբալ (3, 3)—բաղդ, վիճակ:

Ինչկլի (1, 3)—մինչև:

Իսան (2, 3)—մարդ, արարած, բանական:

Իրդար=իդրար (13, 3)—խոստովանություն, համաձայնություն:

Լագար (1 var., 6)—ճաշակ, հաճույք:

Լալ (1 var., 6, 3, 1)—կարկեսան, սուտակ, զոհար:

Լաշ (12, 6), Լեշ (12, 7, 12 var., 3, 6)—գի, գիակ:

Լաշքար (12 var., 5)—բանակ, զորախումբ:

Խաբար (3, 2)—լուր, տեղեկություն:

Խալի (2, 2)—գորգ:

Խալիչա (8, 2)—փոքր գորգ:

Խալիս (15, 2)—ժողովուրդ, հասարակություն:

Խանա (13, 4) — տուն, բանաստեղծության տուն:  
Խասիար (1 var., 1) — բնավորություն:  
Խարագ (4, 1) — չուստ կարող, կոշկակար:  
Խափանգ (11, 1, 3) — թակարդ, որոգայթ:  
Խեյվան (10, 2) — ծառուղի, այգու միջանցք:  
Խիար (15, 5) — վարունգ:  
Խու (1, 1) — բնավորություն:

Կրբլեգյահ (12, 3) — հովանավոր. տե՛ս դբլագյահ:  
Կոզ (8 var.) — վրաց. «կոզի» — կոտ (չափ է):  
Կուլ = կուլա (11, 3) — կավե ջրաման:  
Կուշի (12, 2) — լակոտ:  
Կուտլոանալ (15, 5) — ծովել, կուշ գալ:

Հալ ու ափալ (8, 5) — գրություն և որպիսություն, տրամա-  
գրություն:

Հալբար (2, 3) — երեւի, գուցե, թերեւս, հավանաբար:

Համաշա (9, 4, 13, 4) — միշտ, մշտապես, շարունակ:

Հայիփ (2, 1) — ափսոս, ավաղ:

Հավարա = ավարա (11, 2) — անդործ, պարապ-սարապ ման-  
կող:

Հարամգաղա (1, 2, 1 var., 2) — սլոնկորդի, սրիկա:

Հարգիգ (12, 1, 12 var., 1, 14, 2) — բնավ, երբեք:

Հեյրան (14, 2) — հիացած, դարմացած:

Հիդնուհիդը (15, 5) — հետզհետե:

Հոքմ (14, 1) — հրաման:

Ղադում անել = խաղքմ անել (12, 3) — ծառա, ստրուկ դար-  
ձընել:

Ղաքլ ամ (12 var., 2) — կոտորած:

Ղալամ (3, 2, 12 var., 5) — վրձին, գրիչ:

Ղալմաղալ (3, 1, 4, 5) — աղմուկ, շփոթ, ժխոր:

Ղամ (6, 3) — հոգս, վիշտ:

Ղայիմանալ (12, 8, 12 var., 10) — ամրանալ:

Ղանդ (2, 1) — շաքար:

Ղարդաշ (12, 5, 6) — եղբայր:

Ղարիբ (3, 4) — պանդուխտ, օտարական:

Ղբլագյահ (12 var., 2) — աղոթարան (մահմեդականներին)  
տե՛ս նաև՝ կրբլեգյահ:

Ղոհնում=կոհնում (12 var., 3)—աղբակահ, բարեկամ:  
 Ղոզնոշո (15, 5)—վրաց. վայրի սալորենի (Priunus spinosa L.)  
 Ղ'ոնաղ (8, 3, 8 var.)—հյուր:  
 Ղ'ոշուն (12, 2)—զորք:  
 Ղովում (12, 6)—տե՛ս Ղոհնում:  
 Ղրաղ (15, 2)—եղբ, ասի, կողմ:  
 Ղ'ու—տե՛ս խու:  
 Ղ'ուլ (3, 4, 11, 3, 14, 2)—ստրուկ, ճորտ, ծառ:  
 Ղ'ուրբան (14, 2)—մատաղ:

Մալ (12, 7, 12 var., 6)—անասուն, ապրանք, կայք:  
 Մահանգ (2, 3)—փորձաքար:  
 Մամասախիս (12 var., 5)—վրաց. տանուտեր:  
 Մայա (4, 1)—զրամազուկ:  
 Մատնուր (3, 1)—մատանի, մատնիք:  
 Մարալ (14, 2)—եղնիկ:  
 Մեղափուլ (1 var., 1)—անտեղի, զուր:  
 Մեյմուն (1, 1)—կապիկ:  
 Միանա (13, 3)—մեջտեղի, միասին:  
 Միգան (12, 2)—չափ, կշիռ. փոխ.՝ դատաստան նշանոց:  
 Մինալբուն (1 var., 3)—ոսկե զրամ է:  
 Միրկիտան (1 var., 4)—միկիլտան, գինեվաճառ:  
 Մոդ անիլ (12, 2)—հավաքել, ժողովել:  
 Մոն (14, 3)—վատ:  
 Մոնր (13, 3)—վանական զվրոյի սլատանի աշակերտ, փորբափոր:  
 Մորիգե (12 var., 5)—վրաց. հերթական:  
 Մուբարաք (7, 3)—օրհնյալ, բարեբախտիկ, շահեկան, բարի:  
 Մուզղ (4, 1)—վարձ, վարձատրություն, գին, վճար, աշխատավարձ:  
 Մուշկուլ (2, 2)—մուշկ, մուսկուս, Muscus:

Յադուր (3, 1)—հակինթ:  
 Յասաուլ=յասավուլ (1, 3, 1 var., 5)—ռուս. есаул.  
 Յար (3, 2, 3, 6, 3, 14, 1, 3)—սիրեկան, սիրած, սիրունի:  
 Յարաղնած (13, 3)—զրահավորված, գինված:  
 Յարափ (2, 3)—արդյոք, բառացի՝ սով աստված:

Նալ (3, 1) — պայտ:

Նահախ (6, 4, 8, 1, 5, 8 var.) — անարդար, անիրավացի, ասպօրեհն, իզուր, անտեղի:

Նաղ՝շքար (3, 2) — ներկարար, նկարիչ:

Նաշ (12, 6) — զիալ, դադադ:

Նաչար (15, 3) — անճար, անկարող, ողորմելի, խղճուկ:

Նիգամ (12, 1, 12 var., 1) — կարգ:

Նոխասնո (2, 6) — Թերևս արար. Նոսիսա բառից՝ դեղատոմս:

Նովջվան (12 var., 8) — երիտասարդ:

Նովրիսա (1 var., 7) — նոր հարստացած:

Նոքար (11, 3) — ծառա:

Շախս (2, 3) — անձնավորութուն:

Շախշուր = շախշու (12, 5, 12 var., 9) — շախ ու շուխ, հպարտ քայլվածք:

Շան (12, 3) — սլարսից թագավոր:

Շանգաղա (1, 2, 1 var., 2) — արքայորդի, արքայազն:

Շանի (4, 1, 4, 5, 2) — պարսկական դրամ, շախի, հինգ կոպեկ:

Շափաղար (7, 4) — դթութուն, կարեկցութուն:

Շեյղա (14, 2) — սիրուց խելագարված:

Շիվան (12, 6, 12 var., 3) — սուղ:

Շխամիան (12 var., 2) — վրաց. թունավոր:

Չալիշ գալ (15, 2, 12, 2, 12 var., 4) — ճգնել, ջանալ, աշխատել:

Չարխ (15, 2) — ճախարակ, անիվ:

Չիև (1 var., 4) — կնճիռ, խորշոմ:

Չոլախ (13, 1) — կաղ:

Չոււմ (10, 2) — ինչու, լուռ:

Չուստ (1, 1) — արագ:

Չուստեչուստ (1, 1) — արագ-արագ:

Պար (12, 7, 12 var., 6) — վրաց. ութսուն:

Պոլիցի (4, 5) — ոստիկան, ոստիկանութուն, полиция:

Ջանդակ (12 var., 8) — լեշ:

Ջիվան (14, 1) — նորահաս, երիտասարդ:

Ջվալ (4, 3)—չուլից շինած սլարի, բրդե պարի:  
Ջուխտ (12, 8)—դույգ:  
Ջուզար (15, 1)—սլառասխան, հանդիմանություն:

Ռանմ (11, 2)—գութ, ողորմություն:  
Ռանգ (13, 3)—դույն:  
Ռանգեռանգ (13, 3)—գույնդույն, սև-սև:  
Ռաստ գալ (3, 2, 4, 1)—հանդիպել, սլառահել:

Սադա (1, 2, 1 var., 2)—սլարդ, հասարակ, սլարգամիտ:  
Սադադա (14, 1)—հավատարիմ, նվիրված:  
Սալամ (3, 2, 4)—ողջուն, բարի:  
Սահաբի (15, 3)—խաղողի տեսակ է:  
Սան (12 var., 5)—մեծ կաթսա:  
Սաուզմե (5, 1)—վրաց. նախաճաշիկ:  
Սարսարա (3, 2)—մոլորված, ցնդած:  
Սաֆա (14, 3)—ուրախություն, զվարճություն, քեֆ:  
Սեյրան (14, 2)—զբոսանք:  
Սեյրանգան (13, 1)—զբոսավայր:  
Սրհար (4, 1)—ժամ, սլահ, ժամացույց:  
Սոյ (1, 5, 1 var., 7)—ցեղ, տոհմ:  
Սոյբար (13, 4)—զրույց:

Վարիս (12 var., 5)—ժառանգորդ:  
Վերանա=վիրանա (15, 1, 12 var., 4, 12, 2)— ավերակ,  
քանդված:

Տոտ (15, 2)—ոտք, գետի ճյուղ:  
Տուցաղ (2, 5)—կալանավոր, բանտարկյալ, բանտ:

Րադ'իվ (2, 4, 5, 3, 2, 3)—մրցակից:

Ուն (12, 7, 12 var., 6)—վրաց. չորս հարյուր:  
Ուն, Պար, Դուն (12, 7, 12 var., 6)—վրաց. 483—1795 թ.:  
Ունաբ (15, 3)—աբարեբեն, սլոուդի անուն է (Zizyphus  
vulgaris Lam.):

Փայ (4, 2)—բաժին:  
Փարա-փարա (11, 2)—սլառա-սլառա:

Փրնջան (2, 4, 8 var.)—հախճաղակյա բաժակ:

Փխանդազ=փայանդազ (2, 2) - թագավորի, իշխանավորների կամ այլ սլատվարժան մարդու ոտքերի տակ փռելու ճոթեղեն կամ դորդ:

Փխր (2, 5)—միտք:

Փրանգացնել (2, 3)—բեղամաղ անել, վերավորել. փոխ.՝ օտարադնել:

Փրսանդ (2, 3)—պատեհ առիթ:

Քալամ (3, 2)—խոսքեր:

Քամար (3, 1)—գոտի:

Քարզար (4, 3)—բանվոր, արհեստանոցի աշակերտ, արհեստավոր:

Քափ (8 var.)—փրփուր:

Քերխուդա (12, 5, 12 var., 9)—տանուտեր, գյուղապետ:

Քո<sub>2</sub> (3, 1)—կոշիկ, ոտնաման:

Քուլլու (12 var., 5)—ամբողջի:

Քույա (1, 2)—փողոց:

Քրոնիկոն (12, 7, 12 var., 6)—թվական:

Սրախ (2, 2)—սենյակ:

Սղուշաղ (9, 2, 15, 3)—կին-երեխաներ, ընտանիք:

Սյաղ (1 var., 7)—պատրաստ, արթուն:

Ստկակար (7, 5)—օգտակար:

Սրբում (2, 1)—երդում:

## Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Դուբեիդ (8, p. s.):

Թարիփլամա (1 var., 6, 13, 4):

Թեզլիս (7, p. s., 9, p. s.):

Դոշամա (6, p. s.):

Մուխամմազ || մուխամբազ (13, 4, 13, p. s., 14, 3):

### Յ Ա Ն Կ

#### ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

- Ալի (5, 2):  
Ախտա-խան (12, 3, 12 var. 2)—  
    *ներքինի խան, այսինքն Աղա-  
    Մահմադ-խանը:*  
Առաֆել (1, 1—5, 1 var., 1—7):  
Արաբխտան || Արաբստան (12, 4,  
    12 var., 7):  
Բաղդադ (12 var., 7):  
Բաղդասար (7, 5):  
Բասրա (12 var., 7):  
Բաքի (12, 4):  
Գողերձի (9, 1—5):  
Գուրջխտան || Գուրջստան (12,  
    1, 12 var., 1):  
Դադխտան || Դադստան (9, 2, 12,  
    4, 12 var., 7):  
Դարբանդ (12, 4):  
Զալ [Ռոստոմ]—տե՛ս Ռոստոմ-  
    Զալ  
Զալի (4, 1):  
Թամար (8 var.):  
Թավրիզ (12, 4):  
Թելեք (13, 1—4):  
Թեհրան-Թեյրան (12, 4, 12 var., 7):  
Թիֆլիզ (7, 3, 12 var., 5, 13, 4):  
Թուշի (12, 2, 12 var., 4):  
Թուրք (13, 1):  
Իսպահան (12 var., 7):  
Լուսավորիչ [Կրեդոր] (7, 1):  
Խեսուր (12, 2, 12 var., 4):  
Խորասան (12, 4, 12 var., 7):  
Կուզո (15, 1):  
Հայ (13, 1):  
Հայք (7, 2):  
Հնդու ղիար (15, 5):  
Ղըզլբաշ (12, 6, 8):  
Ղուբա (12, 4):  
Մամմադ խան (12, 1, 12 var., 1):  
Մառնեուլ (1, 3, 4, 1 var., 5, 6,  
    8, 1, 8 var.) *դյուզ է ներքին  
    Քարթլիում, Սոմսիթ-Բորչա-  
    լուում, Սանդար կայարանի  
    մոտ:*  
Մարմար (7, 5):  
Մելիք-Մեջլում (12, 2, 12 var.,  
    4) *Ղարաբաղի հայ մելիքնե-  
    րից մեկը:*

Մեկըն [Շամշի] -- տե՛ս Շամշի-  
Մեկըն:

Մեկըն (7, 5):

Մեջլուս [Մեկիթ] (12, 2, 12 var.,  
4) -- տե՛ս Մեկիթ-Մեջլուս:

Մոսկով (8 var.):

Յոսեփ [Արդության] (7, 1) --  
արքեպիսկոպոս, ասլա կաթո-  
ղիկոս (չօծված, վախճ. 1801):

Շամշի-Մեկըն (1, 5, 1 var., 7, 2,  
5, 3, 4, 4, 5, 5, 3, 6, 5, 7,  
4, 5, 8, 6, 9, 5, 11, 4, 12, 8,  
12 var., 10, 13, 3, 14, 3):

Շավի (8, 4, 8 var.) -- դեռ է Ստո-  
րին Քարթլիում, նույն Մաշա-  
վերին (Մաշավ-եր-ի)

Շաքի (12, 4, 12 var., 7):

Շիրվան (12, 4, 12 var., 7):

Շուշան (7, 5):

Շուշի (12, 2, 12 var., 4):

Չարյաք (12, 2):

Չերքեզ (12 var., 4, 2<sup>2</sup>):

Չիրախենք (15, 1):

Պարսիկ (12, 1):

Պեցեմեկեր (9, 1):

Ջավար-խան (12, 2, 12 var.,  
1, 4) -- Գյանջալի խանն է:

Վերա (9, 1--2) -- Թրիլիսիի թա-  
ղամաս:

Վրացի (13, 1):

Տալավեր (1, 1, 1 var., 1) --  
գյուղ է Ստորին Քարթլիում,  
այսինքն Սոմխիթ - Բորչա-  
լումում:

Ռոստոմ-Ջալ (3, 1):

Փշավ (12 var., 4):

Փրանգ (2, 3):

Քաշան (12 var., 7):

Քոչորո (12 var., 5) -- 1795 թ. 11.

IX պերսոնաժներից մեկը:

## Բ Ի Բ Լ Ի Ո Ւ Ր Ա Ֆ Ի Ա

1. Ախվերդյան Գ. Հայ աշուղներ, I, Մոսկվա, 1852:
2. Ախվերդյան Գ. Հայ աշուղներ, II, Թիֆլիս, 1903:
3. Ասատուր Գ. Մայաթ-Նովայի հարցը, «Խորհրդային Հայաստան», 1926, 15 IV, № 88:
4. Ասատուր Գ. Անտիպ էջեր, «Գրական թերթ», 1934, 10 VII, № 18:
5. Ասատուր Գ. Մայաթ-Նովայի մահվան հարցի շուրջը, «Խորհրդային գրականություն», 1936, № 1:
6. Ասատուր Գ. Շամչի-Մեքրո, «Պատմություն և գրականություն ինստիտուտի Տեղեկագիր», I, Երևան, 1938:
7. «Երրորդ օրացույցը», Բաքու, 1895:
8. Գրիշաշվիլի Ի. Մայաթ-Նովա, Թիֆլիս, 1918 (վրացերեն):
9. Такайшвили Е. С. Описание рукописей „Общества распространения грамотности среди грузинского населения“, т. II, вв. 1—4, изд. Управления Кавказского Учебного округа, Тифлис, 1906—1912.
10. Թարվերդյան Գ. Հայ աշուղներ, Անտիպ էջեր, Երևան, 1937:
11. Լևոնյան Գ. Հայ աշուղներ, Ալեքսոլ, 1892:
12. Լևոնյան Գ. Մայաթ-Նովա, Երևան, 1932:
13. Լ Ե Ո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, I, Երևան, 1926:
14. «Լուսա», 1896, № 1:
15. Հովն[աննիսյան] Գ[իստի]. Աշուղ-բանաստեղծ Շամչի-Մեքրո, «Պուլետար» (Թիֆլիս), 1936, 10 III, № 57 (1936, մարտի 3-ին «Հայաստան»-ը կարգացած մեր դասախոսություն առ-թիվ):
16. Ճանաչյան Մ. Պատմություն արդի հայ գրականության, I, Վենետիկ, 1953:
17. Մելիքսեթ-Բեկ Լ. «Վաղբենավոր»-ի Ղարաբաղյան վարիանտը, «Թուրքիստի Պետ. համալսարանի Աշխատություններ», V, 1936 (վրացերեն):

18. Մելիքսեր-Ռեկ Լ. Շամչի-Մեկքոյի անտիպ երգերից, «Պրոլետար» (Թրիֆլիս), 1938, 6 VIII, № 179:
19. Մելիքսեր-Ռեկ Լ. Հայ հին գրականության պատմություն, Թրիֆլիսի, 1941 (վրացերեն):
20. Մելիքսեր-Ռեկ Լ. Հայ-վրացական գրական փոխհարաբերությանց հաղվադյուտ հուշարձանը (վրացատառ-հայերեն ձեռագիր ժողովածուն), «Թրիֆլիսի Պետ. համալսարանի Աշխատություններ», XXVI-B, 1944 (վրացերեն):
21. Մելիքսեր-Ռեկ Լ. Նորագյուտ վրացատառ-հայերեն ձեռագիր ժողովածուն և XVII—XIX դդ. աշուղական անձանիթ խաղերը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 5:
22. «Բեղու Հայաստանի», 1863, №№ 14, 16:
23. Միանսարյան Մ. Քնար հայկական, ՍՊԲ, 1868:
24. Մկրյան Մ. VIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականության ընտիր նմուշներ, Երևան, 1938:
25. Մնացականյան Ա. Անտիպ էջեր (Սյաթ-Նովա, Շամչի-Մեկքո, անանուն երգիչ, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գրուռի.), 1947, № 5:
26. Շերմազան-Վարդանյան Գ. Նյութեր աղբային պատմության, Ռոստով, 1890:
27. Չիբովանի Մ. Ֆուլլորային էտյուդներ, 1, «Թրիֆլիսի Ա. Պուշկինի անվան Մանկավարժական ինստիտուտի Աշխատություններ», VI, 1949:
28. Ուլխաձե Տ. Հին վրացական լիրիկայի պատմությունից, Թրիֆլիսի, 1954 (վրացերեն):
29. Սահակյան Հ. Շամչի-Մեկքոյի մի բանաստեղծության մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գրութ.), 1957, № 12:
30. Սկանդարով Գ. (Գ. Սկանդար-Նովա). Սալսինո սաղանդաբի, Թրիֆլիս, 1870, 1873, 1875 և 1895 թթ. (վրացերեն):
31. Տեր-Աղեքսանդրյան Գ. Թրիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թրիֆլիս, 1885:
32. Տեր-Կեռքյան—Հովհաննիսյան Ոսկան, Նոր քնար հայկական, V, Մոսկովա, 1859:
33. Րոֆֆի, համառի մեկքությունները, Թրիֆլիս, 1882:
34. Յուդակ վրացերեն ձեռագրաց Վրաստանի պետական թանգարանի, թանգարանի ձեռագիրների նոր հավաքածուն, հատ. 1, Թրիֆլիսի, 1957 (վրացերեն):

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

|                                                                             |    |
|-----------------------------------------------------------------------------|----|
| 1. Շամչի-Մելքոյի կյանքն ու ստեղծագործութիւնը . .                            | 5  |
| 2. Շամչի-Մելքոյի հայերեն խաղերը . . . . .                                   | 31 |
| 3. Բառարան . . . . .                                                        | 75 |
| 4. Եղանակներ . . . . .                                                      | 84 |
| 5. Յանկ անձնանունների և տեղանունների ու էթնիկա-<br>կան տերմինների . . . . . | 85 |
| 6. Բիբլիոգրաֆիա . . . . .                                                   | 87 |



ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՇԱՄՁԻ-ՄԵԼԻՔՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՅՆԵՐԵՆ  
ԽԱՂԵՐԸ

Հրատ. խմբագիր Ա. ԽԱՉԱՏՐԾԱՆ

Տեխն. խմբագիր Լ. ԱԶԻԶՐԵԿՅԱՆ

Վերստուգող սրբադրիչ Օ. ԱՐՁՈՒՄԱՆԾԱՆ

---

ՎՖ 05909 Պատվեր 220, Հրատ. 1578, ԽՀԽ Զ 471

---

Հանձնված է արտադրության 12 V 1958 թ.

ստորագրված է տպագրության 23 V 11 1958 թ.

թուղթ 84 X 108<sup>1</sup>/<sub>32</sub> Տպագր. 4,5 մամուլ. հրատ.

3 մամուլ, տիրած 3000, Գինը 1 ու. 20 կ.

---

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,  
Երևան, Արտվյան 124

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031869